

4000

ԻՒՒՆ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍՏՆԹԱՑԻ

F. ՏԱՐԻ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ, ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ, ԶՐՈՒՑԱԳՐՈՒԹԻՒՆ,  
ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՇԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՈՒ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ



Եանօթէն անձանօթը  
Պարզէն բաղադրեալը  
Դէմ յանդիմանական ուսուցում  
Աստիճանական զարգացում

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ  
Ա. ՍԵՐՎՈՅԷՆ  
Կ. ՊՈԼԿՍ

1910

491.99-8

Մ-23

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. ՍԵՐՎԻՉԷՆ

Կ. ՊՈԼԻՍ

2010

Վ. 49.

ՍԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒ

ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՐԵՓՈՒՈՒԱԾ

ՏԱՐԲԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Բ. ՏԱՐԻ

ԹՊՈՂ  
\*  
Բ 2002

428  
140-ՍԱ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ

491.99-8

Վ-23

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Բ. ՏԱՐԻ

ԸՆԹԵՑԱՆՈՒԹԻՒՆ, ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ, ԶՐՈՑԱԳՐՈՒԹԻՒՆ,  
ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՏԱԴՐԱԿԱՆ ՈՒ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ

Ծանօթէն անձանօձը

Պարզէն բաղադրեալը

Դէմ յանդիմանական ուսուցում

Ասիճանական զարգացում

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. ՍԵՐՎԻՉԷՆ

Կ. ՊՈԼԻՍ

1910



1002  
8784  
16839-58

33278-4.4.

85

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՇԱՅՈՑ

Կ. Պոլիս, 5 Փետրվար, 1905

Համար 1982

### ՎԱԿԵՐԱԳԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ուսումն. Խորհուրդս ինկուրեան առաւ «Մայրենի  
Լեզու» դասագրքին Բ. մասն որ կը պատկանի Տարրա-  
կան Դասընթացքի շրջանի, եւ անոր պարունակութիւնն  
օգտակար եւ պատաստութիւնը հաւաձայն զտեղով Ազգ.  
Վարժարանաց կրթական ծրագրին՝ վաւերացուց զայն  
եւ արտօնեց անոր կիրառութիւնը Տարրական Դասըն-  
թացքի աշակերտաց եւ աշակերտուհեաց համար :

Ի Դիմաց Ուսումն. Խորհրդոյ  
Վ. Ատեճաղպրի Ատեճապետ  
ԲԱՐՍԵՂ ԱԻՆՏԻՍԵԱՆ ՏՕԳՓ. Տ. ԱԶԵՍԵԱՆ



# Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒ» Ի ՏԱՐՐԱԿԱՆ Բ. ՏԱՐԻՈՑ

«Մայրենի Լեզու»ի դասագրոց Մանկական շրջանի Ա. Ե. Բ. Ե. Տարրական Ա. հատորներն հրատարակուեցան արդէն բոլորովին նոր Ե. դիւրուսոյց մեքոտով մը :

Այս անգամ Յանձնաժողովս հրապարակ կը հանէ Տարրական Բ. Տարին , որու բովանդակութիւնն՝ յօրինուած է կանոնաւորապէս միօրինակ յատակագծի մը վրայ, այսինքն մէն մի հատուած կը ներկայացնէ բարոյական կամ իրագիտական ընթերցանութեան նիւթ մը որուն իմաստի մասին խորհրդածելու Ե. վերլուծելու թելադրող հարցումներ կան հատուածին վերջը , ինչպէս նաեւ գրուցագրական Ե. բառագիտական վարժութիւններ :

Յանձնաժողովս կը յուսայ թէ վարժարանաց վարիչներ Ե. ուսուցիչներ պիտի գնահատեն «Մայրենի Լեզու»ի դասագրքին նոր ուղղութեամբ պատրաստութիւնը , Ե. պիտի ջանան իրենց պաշտօնավարած դպրոցներուն մէջ գործածել զայն , մանաւանդ որ սոյն հրատարակութեան գոյացած հասոյթը յատկացուած է գիւղական կարօտ դպրոցներու պէտքերուն նպաստելու :

Կ. Պոլիս

1905

ԱՋԳ. ՊԱՏՐԱԳՐԱՐԱՆ

ՆՊԱՍՏԻՑ ՅԱՆՋՆԱԺՈՂՎ





ծագի . երբոր փայլուն ճամբով անաջ կուգայ , բոլոր երկիրս իր շուսով կ'ողողի :

Բայց աւելի փառաւոր է Ան որ արեւը ստեղծեց . ինք ամէն տեղ կը մտնէ , իր երեսի լոյսը իր ամէն արարածները կը լուսաւորէ , ինք գիշեր չունի : Անոր անունն է ԱՍՏՈՒԱԾ : Իր գործն է աշխարհս , ինքն ալ իր ամէն գործէն վեր է , ինքն է գեղեցկութիւն , զօրութիւն , կարողութիւն :

Թեւադրութիւններ . — Ինչպէս կը տեսնէք վարդը : — Ո՞վ է գեղեցիկը : — Կենդանիներն ի՞նչ կ'ըլլան անիւծէն : — Ո՞վ է աւելի զօրաւոր : — Արեւն ի՞նչպէս է : — Ո՞վ է աւելի պայծառ : — Ո՞վ է գեղեցկութիւնը , զօրութիւնը , կարողութիւնը :

2. Բացատրել շեղագիր տառերը . — Թեւադրութեամբ գրել հատուածը :

3. Որոշել անուններն ու բայերը :



### ԵՐԿՈՒ ՔՈՅՐԵՐ

Ա.

Մեզմէ շատ անաջ կար մէկ թագաւոր , Ունէր ան երկու նորասի աղջիկ , Մէկը յոյժ տգեղ , միւսը գեղեցիկ : Օր մը տգեղը ըսաւ միւս քուրին . « Երթանք ծովափը , քուրիկ , միասին : » Սիրունը գնաց տեսնում առջևէն , Իսկ չար տգեղը անոր ետևէն . Հազիւ թէ ծովուն ափն էին հասած , Իր սիրուն քոյրը գլորեց վար , ցած : Կանչեց կիսամեռ սիրունը ծովէն՝ « Քոյրիկ ի՞մ քոյրիկ , փրկէ զիս մահէն : Ես ունիմ տունը գեղեցիկ մանեակ , Ա՛ռ , քեզի ըլլայ , պարգևէ՛ իմ կեանք : — Զայն առանց քեզ ալ կրնամ ստանալ , Ինձմէ փրկութիւն բնա՛ւ մի յուսար : » Տգեղին սիրաւ դարձեր էր լեռ քար , Դրոջ խնդիրքը թողուց անկատար :

Բ.

Չկնորսը ծովը ձգեց մեծ ոռկան ,  
 Բռնեց մարմինը սիրուն աղջկան ,  
 Զուրէն դուրս հանեց , դրաւ ափի մօտ ,  
 Շատ ծաղիկ ցանեց վրան ու շատ խոտ :  
 Աշուղ մը անցաւ , աղջիկը տեսաւ ,  
 Լացաւ ու առաւ , ուսին վրայ դրաւ ,  
 Տարաւ իր տունը այդ անզին գիւտը ,  
 Եւ չորցուց անոր մարմինին հիւրը ,  
 Գեղեցիկ տալի շինեց ոսկորէն ,  
 Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերէն .  
 Երբոր ամէն բան պատրաստեց կարգին ,  
 Գնաց աղջկան տուն տաւիզը ձեռքին :  
 Բացաւ բերանը , լարերը ցնցեց ,  
 Հիւրերուն առջև քաղցրաձայն երգեց .  
 « Լսէ՛ , Ժողովուրդ , լսէ՛ անխռով .  
 Հարազատ քոյրս գլորեց զիս ծով : »  
 Դահիճներ միւս օր խարոյկ շինեցին ,  
 Մահապարս քոյրը մէջը գլորեցին .  
 Հուրը պրպրաց , աղջիկը կանչեց .  
 « Ի՞նչ մեղքիս համար Աստուած զիս պատժեց : »

Թելադրութիւններ . — Բարոյական դասեր , քաղել  
 թելադրութիւններով : — Բացատրել շեղագիրները : —  
 Զրուցագրել հասուածը .

Կ Ո Վ Ը



Գ ո մ

Գունը մտնենք , տեսնենք  
 թէ՛ տեսնենք կիներն ի՞նչպէս  
 կար կը կրեն : Այդ քարն ու  
 փոփոռն կաթէն այն ինչ կը  
 կթեն՝ կը խմեն : Բայց միայն  
 խմելը բաւական չէ , բան մըն ալ սորվելու ենք :  
 Ուշագորութիւն ընենք մեր կովին թէ՛ ի՞նչպիսի  
 մարմին ունի , ի՞նչ բանով կը զանազանուի ձիէն :  
 Կովը ձիէն քիչ մը ցած է՝ բայց հաստ , մեջքն ալ  
 ցցուած , բոլոր ոսկորները դուրս ինկած ու կողերն  
 ուռած են : Կովուն գլուխն այնչափ գեղեցիկ չէ ,  
 դունչը բարձր է , պարսկացի բարակ ու կուրծքին  
 վրայ աւերորդ միս մը կախուած է : Ետեւի ոտքե-  
 ղուն մէջտեղը մեծ կուրծք մը ունի ուր առատ

կաթ կը պատրաստուի : Կովուն ոտքերը հաստ ու ձիուն ոտքերէն կարճ են . երկերկու կձողակներ ունի : Պոչը յուսակի պէս կախուած է և միայն ծայրը մազէ փունջ մ'ունի :

Կովը ձիուն չափ գեղեցիկ չէ, վազելը չ'սիրեր, վրան նստիլն ալ յարմար չէ : Միայն եզները կը գործածուին քեռ կրելու համար, որովհետև անոնք ուժեղ են ու հաւքերսար : Կովուն աչքերը չունին այն իմացականութիւնը զոր կ'արտայայտեն ձիուն աչքերը : Պարանոցն ալ կարճ է եւ եռանդոտ, ձիուն նման չի կրնար վերցնել իր դունչը : Կովը ճակտին վրայ երկու մանգղամաշ կոտոշներ ունի որոնք ոսկորէն կակուղ են, ականջներն ալ աւելի մեծ և դէպ'ի մէկ կողմ ուղղուած են : Կովն ալ ձիուն պէս բերնին մէջ հերձասաւներ ու սեղանասաւներ ունի, բայց անոր հերձատամները ութը հատ են և ստորին կզակին վրայ, իսկ վերի կզակին վրայ ակուանբուն տեղ միայն հաստ կաշի կայ : Զիբուն ստորին կզակը միայն դէպ'ի վեր ու դէպի վար կրնայ շարժիլ, իսկ կովերունը ասկէ զատ աջ ու ձախ ալ կը շարժի եւ այսպէս խոտը մանրելու դիւրութիւն կուտայ :

Թեյադրութիւններ . — 1. Գոմն ինչ կայ . — Ինչպէս կովն կը զանազանուի ձիէն ու գլուխն ինչպէս է . — Պարանոցը . — Կո՞ւրծքը . — Պո՞չը :

2. Բացատրել շեղագիրները . — Զրուցագրել հատուածը :

3. Որոշել ենթական, ստորագելին ու բայը :

4. Որո՞ւ կ'ըսուի նոխարասութիւն . — Որո՞ւ կըսուի շաղկապ . — Որոշել շաղկապները :

1002  
1001  
18784  
16839-58



Զ Ի

Զին խելացի կեանքակնի է : Մարդս անկից ո՞րքան օգուտ կը քաղէ : Ամէն տեղ կը տեսնուի, դաշտին մէջ՝ երբ արօրը կը քաշէ, ճամբուն վրայ՝ երբ կը ջանայ որ զառիյերն հանէ քեռցած սայրը, ախոռին մէջ՝ երբ ախորժակով զարի կ'ուտէ,

առօսալայրը՝ երբ ազատօրէն կ'արծի ջոյիրիւն մէջ .  
 Բարի, չարքաշ ու գեղեցիկ է : Սա՛ վասնաւոր  
 յասկութիւնները կը նշնարուին անոր վրայ . Գլու-  
 խը երկայն է՝ բայց գեղեցիկ, դունչին ծայրը  
 դուրս ցցուած, ականջները մանր են ու դէպի  
 վեր կը նային : Երբ ձին օտար ձայն մը լսէ կամ  
 իր տիրոջ ոտքին տրոփիւնը ճանչնայ, այդ ականջ-  
 ները կը շարժին, վեր կը ցցուին : Ականջներուն  
 մէջտեղը, ճակտին վրայ, մազէ փունջ մը կայ : Իւ-  
 ռաքանչիւր կզակի առջևին վրայ վեց վեց թիւ-  
 կանւնան հերձատամներ ունի՝ որոնցմով կը կրծէ,  
 կը կտրէ խօտը :

- Թեյադրութիւններ . — 1. Ախօռն ի՞նչ կայ . — Ձին  
 ի՞նչպէս կը զանազանուի կովէն ու գլուխն ի՞նչպէս է .  
 — Պարանոցը . — Կո՛ւրծքը . — Պո՛չը :
2. Բացատրել շեղագիրները . — Զրուցագրել հատ-  
 աւածը :
3. Որոշել ենթական, ստորագելին ու բայը . — Ու-  
 րո՞ւ կ'ըսուի նախադասութիւն :

### ԱՅՏԵՐԻՆ ՈՒ ՈՉԻԱՐՆԵՐԸ

Ոչխարը կայթով կ'արծէին,  
 Եւ այծեր կը տեսնէին  
 Թէ անոնք ետեւնին  
 Կը շարժէին դեակնիւն .  
 « Ի՞նչ է այդ, չէ՞ք ամչնար,  
 Ի՞նչ քալուածք, անաւօրներ,  
 Խոչոր խոչոր ծրարնիդ  
 Կախած, ձգած ետեւնիդ » :  
 Այս կ'ըսէին զի վաս նախանձու  
 Ոգիէն առած էին շար լեզու :  
 Ասոնց կուտայ ոչխարն պատասխան .  
 « Մեր պարկեշտութիւնը ցուցնելով՝  
 Կ'արծենք՝ դմակնիս  
 Զգած ետեւնիս .  
 Դո՛ւք նայեցէք որ չունիք ծածկոց » :  
 Բարոյական . — Նախանձոսը  
 Գէշ կը տեսնէ  
 Լաւն ու բարին :

- Թեյադրութիւններ . — Բացատրել շեղագիրները . —  
 Զրուցագրել հատուածը :

### ԱՂՈՒԷՍ ՈՒ ԱՔԼՈՐ

— « Վարդավառի տօնէ այսօր,  
 Իջի՛ր ծառէդ, սիրո՛ւն Աքլոր,  
 Ինձ հետ կարդա՛ երգ, շարական,  
 Մասաղն օրհնենք սերունական » — :

Աղուէսն այսպէս համոզիչ էր .  
 Ասոր Աքլորն սապէս կ'ըսէր .

— « Սակայն, տե՛ս, նախ հարկ է, Աղուէ՛ս,  
 Որ ժամկոյի ձայն ձգեմ՝ ես,  
 Ապա իջնել և ժամ՝ երգել .  
 « Կուկուլիկ կո՛ւ, տօն է այսօր .

Սուրբ Կարապետն է փառաւոր — » :

Աքլորիկին այս սուր ձայնէն  
 Ծնիկն սրափ՝ հասաւ խածաւ,  
 Աղուէսն կ'ոռնար՝ վիրաւորուած՝  
 Իսկ Աքլորիկ ծառին վերէն,  
 — « Աղուէ՛ս, կ'ըսէր ծիծաղելէն,  
 Այդ անճոռնի ձայնով պիտի  
 Երգէիր տօն Վարդավառի » — :

Թէլադրութիւններ . — Բացատրել շեղագիրները . —  
 Ուղղագրել հասուածը .

### Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Պղտիկ քուն կը քնանայ,  
 Մեծ երազներ կը տեսնէ :  
 (Անօրի է, բայց միտս հպարտ)

### Ս Ռ Ա Մ

Մարդուն աչքն ելլէ քան անունը :

\* \* \*

Կատուին դունչը մտի կտորին որ չհասաւ,  
 « Այսօր ուրբաթ է » ըսաւ :

### Կ Ա Տ Ո Ւ Ե Ւ Օ Չ

Կատուն աչքերը խոռեց, պերելեշը ոյորեց,  
 Ճակկեր արեց ու շակեց, անսուկ օձին դէմ վաղեց,  
 Իր մէկ թաթիկ վերել բռնած իր քթին՝  
 Միւսով օձին զարնէր գլխին ու այֆին,  
 Կը փոփոխէր, շուրջ կը ցատկեր :  
 Իսկ օձ շէր եւ դէմ դնէր :  
 Լեզուն ցցած, վեր իր պոչին արձանացած՝

Ձարնել ջանար կատուի քթին մահու հարուած :  
Ճիշդ այդ պահուն էր որ մուկը հեռուն նստեր՝  
Թարր կործինն՝ կատուին օ՛խ, օ՛խ, կը մաղթէր,  
Եւ ծիծաղէն կը մարմնէ՛ր :

Ձգիմացաւ այլ եւս կատուն, թողուց օձը,  
Սրացաւ, թռա՛ւ, հասաւ ճանկեց յարսիրս մուկը :

\* \* \*

Երբ թշնամիդ կուռի է բռնուեր

Ուրիշի հետ՝ մի՛ արհամարհեր,

Այլ նայէ որ խոհեւօրէն

Օգուտ քաղես անոր կուռէն :

Թելադրութիւններ . — Բացատրել շեղագիրները . —  
Զրուցագրել հատուածը :



### Փ Ի Ղ Ը

Հնգիկ մը փիղ մ'ունէր զոր շատ գէշ կը կե-  
րակրէր և որուն հետ շատ գէշ կը վարուէր : Օր  
մը փիղը ըստկացաւ և իր ոտքին ներքև սպաննեց  
իր տէրը : Հնգիկին կինը՝ արժանաւարտով այժմ՝  
բերաւ իր որբ մնացած զաւակներն և նետեց զա-

նոնք փղին ոտքին առջև . « Փի՛ղ, դուն սպաննե-  
ցիր ասոնց հայրը, զիրենք ալ սպաննէ այժմ »,   
ըսաւ անիկա : Փիղը կարեկցուքեաւրք նայեցաւ  
սղեկներուն, յետոյ կնճիթովը վերցուց ամենէն  
մեծը, զգուշութեամբ նստեցուց զայն իր վիզին  
վրայ և այնուհետեւ սկսաւ հնազանդել անոր իբրեւ  
իր օրինաւոր տիրոջը :

- Թելադրութիւններ . — 1. Փիղն ինչո՞ւ գէշ կը վար-  
ուէր . — Ինչ ըրաւ հնգիկը . — Փի՛ղն ինչ ըրաւ :  
2. Բացատրել շեղագիրները . — Զրուցագրել հատ-  
ուածը :  
3. Որո՞ւն կ'ըսուի մակբայ :  
4. Որոշել մակբայները :



Կ Ա Պ Ի Կ Ճ Պ Ն Ա Ի Ո Ր

Ա.

Աղուխանկն ու իսաժ Կապիկ  
 Խորհուրդի նստան մեկնիկ  
 Թէ ինչպէս ճարեն դիւրին  
 Գիրուկ որսեր իրենց փորին :  
 Պնդեց Աղուէս . « Մինակ ճար հնար  
 Գիտես ի՞նչ է Կապիկ աղբար .  
 Լսած եմ թէ կատուն երբեմն հազեր փիղոն  
 Եւ եղած է ճգնաւորիկ, ուշիւ, զգօն ,  
 Որսալու համար մուկեր դիւրաւ :  
 Ուստի հիմա շուտով կ'երթաս ,  
 Փիլոն , վեղար դու կը գողնաս ,  
 Սա մեր մօտիկ վանֆին  
 Ճգնաւորին ,  
 Եւ կ'ըլլաս ճգնաւոր  
 Փառաւոր :

Բ.

Եւ ահա յանկարծ լեռ ձոր մեծ համբար  
 Ամէն տեղ օր մը տարածուիլ սկսաւ

Թէ հրաշագործ մի ճգնաւոր բժիշկ ցաւի է  
 քիւրաւոր .

Վկա՞յ — Աղուխուկն է որ կը պնդէր ,  
 Այն է զօրաւոր ու շնորհաբեր :  
 Անցան օրեր , այս մեծ համբար  
 Քաջ Առիւծին ականջն հասաւ .  
 Կուսնեց իսկոյն թէ հոն խարդախ  
 Կապիկ , Աղուէս կը խաղան խաղ :  
 Ուստի հիւանդ ան ձեացաւ  
 Սուրբն ու վկան տեսնել եկաւ :  
 Բայց երբ Կապիկ դրաւ իր աջ ,  
 Յատկեց իսկոյն Առիւծն քաջ ,  
 Կը պատուտէր , կը մոնջէր :  
 Իսկ Աղուէսը երբ այս տեսաւ ,  
 Լեղապատստ ձգեց փախաւ .  
 — « Լաւ որ եղեր եմ փոքրաւոր » :

Թելադրութիւններ . — Բացատրել շեղագիրներն ու  
 զրուցագրել հատուածը :

### ԿԱՊԻԿՆ ՈՒ ՀԱՅԼԻՆ

Կապիկ գտաւ հայրի կտոր,  
 Ա՛լ կը նայէր աչերն խոշոր,  
 Ձևեր կ'ընէր, կը ծռւնկէր,  
 Հազար տեսակ կոկոռէր շտկուէր,  
 Դունչ ու բերան, քաթ ու տոտեր  
 Յոյց տար, ծածկէր: Ա՛լ ինչ ընէր.  
 «Է՛հ, գոչեց  
 Վերջապէս,

Թող գետինն անցնին մարդիկ բոլոր որ հայրին  
 Ժամով ու օրով առջեւ կեցած՝ կը մարմնիս,  
 Ձի կուտայ եղեր իրենց դէմքի գոյն շաւազեղ,  
 Վա՛յ ատոնց խելքին, ահաւասի՛կ ինձ շատ տգեղ  
 Վկայ փորձն ահա

Կերպարանք ցոյց տայ:  
 Խենդ են, խենդուկ, Աստուած վկա՛յ,  
 Մարդոց խելքին ո՞վ կը հաւտայ»: —  
 Բարկութենէն կապիկ կատղած՝  
 Նետեց հայրին,  
 Զարկաւ քարին,  
 Յրեխ ցրելս փշրեց, գնա՛ց:

Թելադրութիւններ. — Բացատրել շեղագիրներն ու  
 զրուցագրել հատուածը:

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ  
 Զուրը կ'իյնայ  
 Ու չի Թըջեր,  
 Հողը կ'իյնայ  
 Ձի ժանգոտիր:  
 (Ոսկի)



### Ա Ր Ծ Ի Ի Ը

Արծիւը թռչուններուն իշխանը նկատուած է,  
 Խաւրակներու ծայրերը կը բնակի, անայի աշտա-  
 րակներու, մեկաւոր փշատակներու վրայ: Իր  
 բոյնը տափակ ձև մը ունի, ընդելուզուած ճիւ-  
 ղերէ կաղմուած, և կնիւններով ու ցախերով

ծածկուած է : Կ'ըսեն թէ բոլոր կեանքին մէջ միևնոյն բոյնին վրայ կը թխսեն ան : Այնքան ուժեղ է որ ոչխարներ ու այծեր կը յափշտակէ կը տանի : Արծիւը կրնայ երկար ատեն անօթի մնալ, մինչև երեք շաբաթ կը դիմանայ : Երբ պղտիկուց բռնուի, կրնայ թռչնարանի մը մէջ պահուիլ, բայց չփոխեր իր վայրենի բնաւորութիւնը, և եթէ քիչ մը զայրանայ՝ կատաղութեամբ նոյն խակ իր տիրոջը վրայ կը յարձակի :

Թելադրութիւններ . — Ուր կը բնակի արծիւը . — Իր բոյնը ի՞նչ ձև ունի : Բացատրել շեղագիրները . — Զրուցադրել հատուածը . — Որոշել սահմանական ներկաները :

Հ Ա Ն Ե Լ Ո Ի Կ

Մեծ հոր մը կայ

Աշխարհ ամէն մէջը կ'իյնայ

(Ա.կանց)

\* \* \*

Հոս կը ցանեմ

Ուրիշ տեղ կը բուսնի

(Նամակ)



Ե Կ Ք Ա Ն Ի Կ Ը

Եկքանիկը մեր երկրին ամենէն սիրուն թռչուններէն մէկն է, իր կարմրուկ դէմքը, ոսկեփետր թևիկները, կոնաձեւ սև կտուցը՝ որ միշտ կը շալ ժի պեղեղու և կտցելու փափաքով՝ տարօրինակ կերպով գգուելի բան մը կուտան իր պղտիկ մարմնոյն : Այնքան աշխոյժ և կրակոտ է ան, որ տեղ մը հանգարտ չկրնար կենալ, ինչ որ դտնէ իր շուրջը՝ մէկ կողմէն մըսը կը փոխադրէ ան, և զանազան խաղեր ըսելու ալ յարմարութիւն ունի : Երբ վանդակին առջև գաւաթ մը ջուր դնելով մատնոց մը կախես՝ ջուր կը քաշէ, երբեմն մեռել կը ձևանայ, և երբոր հրամայես իրեն՝ յարութիւն կ'առնէ :

Թելադրութիւններ . — Հարցումներով բացատրել շեղագիրները . — Զրուցադրել հատուածները . — Որոշել անվաններն ու գոյականները :



### Մ Ե Ղ Ո Ւ

Ի՞նչ կայ տրդեօք աւելի հիսուսայի քան մեղուներուն փոքրիկ պարոյ : Իրօք բարեկարգ կազմակերպութիւն մը ունին իրենց փերակներուն մէջ. ունին թագուհի մը որ բնաւ չ'աշխատիր և աշխատիլ ստիպուած չէ, վասն զի ամենքն իբե՛ն համար կ'աշխատին, կ'երթան, կուգան, սնունդ կը բերեն : Բայց եթէ թագուհիէն զատ մեղու մը չուզէ աշխատիլ, իսկոյն կը ծեծեն : Ամենքն ալ իրենց զբաղումն ունին, ոմանք փեթակին մաքրութեան հոգ կը տանին, ուրիշներ բաւարարներու վրայ կը հսկեն : Ուրիշներ փեթակին երկու կողմը շարուած՝ կը պաշտպանեն զայն իրրեւ աշարուջ հսկողներ : Ուրիշ խումբեր ալ առտուն կանուխ ծաղիկներուն այցի կ'երթան և իրենց համար հարկաւոր եղած հիւրք կը քաղեն և առանց մոլորեցում կը դառնան իրենց տունը : Հոն կը զատեն այդ հիւթին այն մասն որ մեղրամոմ ըլլալու յատուկ է, անով

բջիջներ կը շինեն եւանոնց մէջ կը գետեղեն անուշիկ մեղրն որ մաքուր մնայ :

Այս ամենքը սխալեցի ներդաշնակութեամբ կը կատարուի, բնա՛ւ շիտթութիւն, բնա՛ւ անկարգութիւն. կարծես մտածուած կարգ ու կանոն կը տիրէ իրենց մէջ :

- Թելադրութիւններ . — 1. Նկարագրել մեղուները . — Ի՞նչ բարոյական դաս կրնաք քաղել :  
 2. Բացատրել շեղագիրները . — Զրուցագրել :  
 3. Որո՞նք կ'ըսուի անտորջ ածական . — Անտորջ դերանուն . — Որո՞չել նախադրութիւնները :

### Ս Մ Բ Ա Կ Ա Ի Ո Ր Ն Ե Ր

Սմբակաւոր կը կոչուին այն կենդանիներն որոնք իրենց ոտքերուն ծայրը մէկ մատ ունին, հաստ եղունգով մը շրջապատուած, որ անբակ կը կոչուի : Մարդիկ անոր վրայ պայտ կը գամեն որպէս զի դիմանայ, շուտով չ'մաշի : Այս սմբակաւորները կը գործածուին հեծնելու, բեռ կրելու, կառփ ու սայլ քաշելու : Անոնց մորթով կը շինեն կաշի :

Ոսկորը ու անբակը կը գործածեն զվերի կոթ և կոճակ շինելու :

Սմբակաւոր կենդանիներն են՝ ձի, եղ :

Ա. Ռ. Ա. Ծ

Մինչև որ ձին ձի ըլլայ,

Զիռն տէրը ի՞նչ կը քաշէ,

Մինչև տղան մարդ ըլլայ,

Վարժապետը ի՞նչ կը քաշէ :


Թ Ա Ն Զ Ր Ա Մ Ո Ր Թ Ն Ե Ր

Թանձրամորթները շատ թանձր մորթ ունին :



Խ Ո Ղ

Խոզը ընտանեցած է, զայն կ'արածեն ոչխարի պէս, միտը կուտուի, մորթն ու ոսկորները կը գործածուին : Վայրի խոզը կը կոչուի վարազ :



Փ ի Ղ

Փիղը չորքոտանի սանաւոր կենդանիներու մէջ ամենէն խոշորն է, ուղտէն ալ մեծ է, տաք երկիրներու մէջ կ'ապրի : Փիղին քիթը երկայն է եւ պատիւն կը կոչուի . կենդանին իր պատիճը կ'երկընցնէ, կը շարժէ եւ ունեղորքեան կը գործածէ ձեռքի պէս . պատիճին երկու քովերը բերնէն դուրս կը ցցուին երկու մեծ ժանիքներ : Փիղը կրնայ ընտանի դառնալ ու կրթուիլ . այն ատեն կը գործածեն զայն հեծնելու ու բեռ կրելու : Փիղին ժանիքները փոխաւար կ'ըլլան . ասով կը շինեն սահմար, դանակի կոթ ու կոճակ :

Թեյադրուքիւններ. — 1. Որո՞նք կը կոչուին սմբակաւոր կենդանիներ . — Ի՞նչի՞ կը գործածուին . — Ի՞նչ օգուտ ունի անոնց մորթը, ոսկորը, սմբակը . — Որո՞նք են թանձրամորթները : — Ի՞նչ օգուտ ունի խոզը : — Փի՞ղը : — Ի՞նչ կ'ընէ պատիճով : — Փիղը կրնա՞յ կրթուիլ : — Ի՞նչ օգուտ ունի :

2. — Բացատրել շեղադիրները : — Զրուցադրել հատուածը :

3. Որո՞չեւ անուններն ու բայերը :

### Ս Տ Ն Ա Ի Ո Ր Ն Ե Ր

Ստնաւոր կենդանիներն են մարդէն զատ՝  
 1. Կապիկներ, 2. Մասկերներ = գազաններ՝ ինչպէս  
 առիւծ, 3. Կրծողներ՝ ինչպէս մուկ, 4. Որոճա-  
 ցողներ՝ ինչպէս ոչխար, 5. Սնրակաւորներ՝ ինչ-  
 պէս ձի, 6. Թանձրամորթներ՝ ինչպէս փիղ, 7.  
 Թռչուններ՝ ինչպէս ճնճղուկ, 8. Կիսազգիներ՝  
 ինչպէս ձուկ:

#### 1. Կ Ա Պ Ի Կ Ն Ե Ր

Կապիկները մարդոց շատ կը նմանին թէ՛  
 մարմնով և թէ՛ շարժումներով, մարդէն ետք ամե-  
 նէն խելացի կենդանիներն են:

Կապիկները կը բնակին տաք երկիրներու մէջ  
 և կը սնանին պտուղ ուտելով: Շատ ցեղեր ունին,  
 ոմանք մարդու չափ խոշոր են և պոչ չ'ունին, ու-  
 րիշներ ալ փոքր են ու երկայն պոչ ունին:

#### 2. Մ Ս Ա Կ Ե Ր Ն Ե Ր

Մսակերները խոշոր ակռայ ունին, թուշուն-  
 ներ ու ձուկեր սպաննելով կ'ուտեն: Կան խոշոր

մսակերներ որ աւելի ահարկու են, շատ ուժով  
 են և մինչև իսկ մարդոց վրայ կը յարձակին.  
 ասոնք կը կոչուին գազան: Կան ուրիշներ ալ որ  
 փոքր են, մարդոց վնաս չեն կրնար տալ և կը  
 կոչուին ընճանի:

#### Գ Ա Ձ Ա Ն Ն Ե Ր

1. Առիւծ. — Մսակերներուն  
 մէջ ամենէն քաջն առիւծն ըլլա-  
 լուն համար՝ մարդիկ զայն անուա-  
 նած են կեկոսիներու իշխան:  
 Չազը կը կոչուի կորիւն:



Ա Ա Ր Ը

2. Վագրը առիւծէն ետք ամե-  
 նէն քաջն ու ամենէն ահարկուն է,  
 մաճաւանդ որ շատ անգութ ալ է:



Վ Ա Ղ Բ



Վ ա Ր ա զ

3. Վարազը վագրին չափ ա-  
հարկու գազան մըն է :



Ա Ր Ջ

4. Արջը դանդաղ կենդանի մըն է . թէ՛ մսակեր է թէ՛ պտուղներ ու մեղր կ'ուտէ : Չագը կը կոչուի թռ-  
ժիւն : Մեր երկրին մէջ թուխ արջը կը ճանչնանք, բայց կան ցուրտ եր-  
կրի մէջ ճերմակ արջեր :



Գ ա Ղ

5. Գայլը խոշոր շան կը նմա-  
նի, բայց շատ վայրենի է . կը  
յարձակի ոչխարի խուճբերու վրայ,  
մինչև իսկ անոնց հովուին վրայ  
եւ կը բզկտէ :



Ա Ղ Ո Ւ Է Ս

6. Աղուեսը խորամանկ ձեւեր  
ունի, գիշեր տօնն կը մտնէ հաւ-  
նօցը, հաւերը կը սպաննէ ու կը  
տանի :

Թեյաղբուքիւններ . — 1. Որո՞նք են ստնաւորները :  
— Գանի՞ խումբի կը բաժնուին :

2. Կապիկն որո՞նք կը նմանի : — Ո՞ր կը բնակին :  
— Ի՞նչ կ'ուտեն : — Ո՞մանք ի՞նչ ունին :

3. Մսակերները ի՞նչ ունին : — Ի՞նչ կ'ուտեն : —  
Խոշոր մսակերները ի՞նչ կը կոչուին : — Որո՞նք ընտանի են :

4. Որո՞նք են դազանները . — Առիւծն ի՞նչ կը կոչ-  
ուի : — Չա՞գը : — Ո՞րն է անգութ կենդանին : — Վարազն  
ո՞րչափ անգութ է : — Արջը ի՞նչպէս կենդանի է : —  
Չագը ի՞նչ կը կոչուի : — Ո՞ր կը բնակի : — Գայլը որո՞նց  
թշնամի է : — Աղուէսն ի՞նչպիսի ձեւեր ունի : — Ի՞նչ  
կ'ընէ :

5. Բացատրել շեղադիրները . — Զրուցադրել հատ-  
ուածը :

6. Որոշել անուններն ու բայերը :

ՍՈՂՈՒՆՆԵՐ ՈՒ ԳՈՐՏԱԶԳԻՆԵՐ

Սողուններն ու գորտազգիները պաղ արիւն  
ունին, ձմեռը չեն երևար, կը պահոււրախ խոյակ-  
ներու մէջ ու երկար ատեն կը քնանան, իսկ ա-  
մառը կ'արթննան իրենց քունէն ու ամէն տեղ  
կ'երևան :

Սողունները ցամաքի վրայ կ'ապրին, երեք

խումբի կը բաժնուին, օճեր, մողեսներ ու կրիաներ:



Օճ

1. Օճերը երկայն մարմին ունին, անդամ չեն կրեր, գետնի վրայ կը սողան, այսինքն երկարելով ու կարճնալով՝ առաջ կերթան. թունաւոր օճերըն երբ խայթեն, վէրք մը կը բանան որ դժուարաւ կը բուժուի:

Ասոնք կ'ապրին քաղաքէն հեռու անբնակ տեղեր: Իժը թունաւոր օճ մըն է:

Անթոյն օճերը քարք կը կոչուին, քնաս չեն տար մարդու. ամէն տեղ կը գտնուին, պարտէզներու և տուներու մէջ անգամ:



Մողես

2. Մողեսը օճի կերպարանք ունի, միայն թէ չորս ոտքով կը քայլէ, ամէն տեղ կը գտնուի, վախկոտ կենդանի է. մարդոց քնաս չի տար:

3. Կրիան սողուն է, մարմինը կարծր պատեանով շինուած է: Երբ թշնամոյն դէմ ինքզինք պաշտպանէ, գլուխն ու ոտքերը պատեանէն ներս կը քաշէ և կը պահուըտի: Կրիաներ կան որ ջուրի մէջ կ'ապրին:



Կրիայ

4. Երբ գորտերը պզտիկ են, ձուկի ձև ունին, շերտպուկ կը կոչուին և ջուրի մէջ կ'ապրին:



Գորտ

ԹՈՉՈՒՆՆԵՐ

Թռչունները շատ տեսակ կ'ըլլան: 1. Ոմանք ողնաւոր կենդանիները կը գիշատեն և կ'ուտեն: 2. Ոմանք երկար սրունքներ ունին: 3. Ուրիշներուն ալ մագիլները մաշկերով միացած են: 4. Կան ալ որ փոքր են ճնճղուկի պէս:

Թռչուններէն շատերը բոյն կը շինեն ու հաւկիթնին հոն կ'ածեն, յետոյ կը թխսեն, այսինքն կը տաքցնեն հաւկիթներն իրենց թևերուն տակ: Քանի մ'օրէն այդ հաւկիթներէն ձագեր դուրս կ'ելլեն:

Ա. Գիշակերներ: Այն թռչունները գիշակեր կը կոչուին որ փոքր սանաւորներ, սողուններ ու ձուկեր, նաև թռչուններ կը գիշատեն ու կ'ուտեն:



Արծիւ

1. Արծիւը գիշակերներու մէջ ամենէն ուժովն ու քաջն է, այս պատճառաւ մարդիկ զայն անուանած են քոյուններու իշխան: Արծիւը անբնակ տեղեր կ'ապրի:



Յին

2. Յին ամէն տեղ կը գտնուի. հաւու ձագեր կը յարիշակէ ու կը տանի ուտելու համար. կոխնը շատ տղեղ է:

3. Բուն գիշերները երեւան կուգայ ու տղեղ ձայնով կը պոռայ: Արտերու մէջ մուկեր կ'սպաննէ ու անոնց միսը կ'ուտէ: Ուրեմն օգտակար կենդանի մըն է բուն:



Բուն

Բ. Հաւազգիներ: Այն թռչուններն, որ հաւնոցի մէջ կ'ապրին, հաւազգի կը կոչուին. ասոնց միսը շատ համեղ է և կ'ուտուի:

4. Հարը երկու օրն անգամ մը հաւկիթ կ'ածէ, որ լաւ սնունդ մըն է:



Հաւ

Հաւուն արուն՝ աքաղաղ, էգը՝ մարի, ճագը՝ վառեակ կը կոչուի:

5. Թռքակը գեղեցիկ թռչուն մ'է, մարդոց կ'ընտանենայ և կը բնակի աղանետունի մէջ:



Թռկակ




Աղաւնի

6. Աղաւնիև ու սասրակը գեղեցիկ թռչուններ են, մարդոց կ'ընտելանան և կը բնակին աղանետան մէջ:

Գ. Ճնճողուկներն են ծիծեռնակ, սոխակ, սարեակ, եկխանիկ, դեղձանիկ:




Ծիծեռնակ



Սոխակ



Եկքանիկ



Դեղձանիկ

Այս թռչուններէն ոմանք միջատ կ'ուտեն, այս պատճառաւ օգտակար են երկրագործներու: Ոմանք պտուղ և հունտ կ'ուտեն, այս պատճառաւ ֆնասակար կը համարուին:

Դ. Երկայնասարուն կը կոչուի երկայն սրունք ունեցողը՝ ինչպէս է Չայլամը:



Չայլամ

Ե. Մաշկոտանի կը կոչուին՝ ոտքերուն մազիկները մաշկերով իրարու միացած ըլլալուն համար: Ասոնք ջրի մէջ կ'ապրին և են:



Մազ



Բաղ

Թ. Ռ. Չ Ո Ւ Ն Ն Ե Ր

Դիչակերներ—Արծիւ, Հաւազգիներ—Հաւ, Ճնճողուկներ—Ճնճողուկ, Երկայնասրուններ—Չայլամ, Մաշկոտանիներ—Մազ:

Կ Ե Ն Դ Ա Ն Ի Ն Ե Ր ՈՒ Տ Ա Ր Ի Ք Ը

Եզը որ խոշոր ու մեծդի է. քսանէն երեսուն տարեկան եղած ատեն շատ ծերացած կը համարուի. մեր դայաւ երիտասարդութիւնը խոր ծերութիւն է անոր համար: Չին, ինչպէս նաև իր համեստ ընկերը՝ էջը, երեսունը հինգ տարեկանէն աւելի չեն ապրիր, խոզը քսան տարեկանին զառաւետալ է, կատուն տասնըհինգէն ետքը ալ մուկ չբռներ, այծը՝ ոչխարը տասնէն տասնըհինգ տարեկան լմնցած են: Ճագարը ութէն տասը տարեկան կ'ապրի: Իսկ մարդը, եթէ կանոնաւոր կեանք մը վարէ, մինչև ութսուն և իննըսուն տարի կրնայ ապրիլ ընդհանրապէս: Հարիւրը անցնողներ ալ կը գտնուին:

Թեյադրութիւններ. — Հարցումներով բացատրել շեղագիրները. — Զրուցագրել հատուածները. — Որոշել անուններն ու նախադասութիւնները:



Խ Ն Ձ Ո Ր Ե Ն Ի Մ Ը

Ա.

Անտառին մէջ կ'աճէր վայրի խնձորենի մը: Աշնան անկէ վայրի խնձոր մը վար ինկաւ: Թռչունները թէ՛ խնձորը կ'սցախարեցին և թէ՛ անոր սերմերը: Միայն սերմ մը ազատեցաւ անոնց կտուցէն և հողին տակ պահուրտեցաւ:

Ամբողջ ձմեռը սերմը ձիւնի տակ մնաց, իսկ զարնան երբ արեգակը խոնաւ երկիրը տաքացուց, սերմը սկսաւ աճիլ, ծիլեր արձակեց դէպ ի խոր, իսկ դէպի վեր յնձիւղեց առաջին երկու թերթիկները: Անոնց մէջէն դուրս ելաւ ցողունը և անոր վրայ երեցաւ առաջին տերեւներուն փոքրիկ կոկոնը, որուն մէջէն վեր բարձրացան կանաչ տերեւներ: Այնուհետև նոր նոր կոկոններ, տերեւներ և ուսեր իրարու ետևէ բուսան, և հինգ տարի վերջը այն տեղ՝ ուր առաջին անգամ սերմը վար ինկած էր՝ գեղեցիկ խնձորենի մը սնկուցաւ:

Թեյադրութիւններ. — Որո՞ւ կ'ըսուի նախադրութիւն. — Որոշել նախադրութիւնները:

Խ Ն Ձ Ո Ր Ե Ն Ի Մ Ը

Բ.

Այգեպանը ձեռքը թափ մը բռնած՝ եկաւ անտառը : Խնձորենին տեսաւ ու ըսաւ . « Ի՞նչ գեղեցիկ ծառ , ինձի պէտք է աս » : Դողաց խեղճ խնձորենին , երբոր այգեպանը սկսաւ անոր տակը փորել , և կը մտածէր թէ ինքը կորսուած է բոլորովին : Բայց այգեպանը զգուշութեամբ փորեց , արմատներուն վրաս չտուաւ , հանեց զայն , եր այգին տարաւ և աղէկ մը տնկեց :

Խնձորենին հպարտացաւ և ինքնիրեն կ'ըսէր . « Կ'երեւի թէ հազուագիւտ ծառ մըն եմ ես որ զիս անտառէն այգի փոխադրեցի » : Աս ըսելով՝ բարձրէն կը նայէր չորս կողմի տգեղ կոճղերուն վրայ որոնց գլուխները լաթով փաթթուած էին : Կ'երևի թէ խեղճը չէր գիտեր որ զինքը կրթաբան տարեր են :

Միւս տարին , այգեպանը եկաւ կոր դանակը ձեռքը բռնած և սկսաւ խնձորենին կրթել : Դողաց խեղճ խնձորենին ու կը մտածէր . « Հիմա ա՛լ բոլորովին կորսուեցայ » :

Խ Ն Ձ Ո Ր Ե Ն Ի Մ Ը

Գ.

Այգեպանը ծառին վերի կանաչ մասը կտրեց և միայն բունը թողուց , ասիկա բաւական չհամարելով՝ բունն ալ վրայէն ճեղքեց , այդ ճեղքին մէջ անցուց սիրուն շառաւիղ մը զոր ուրիշ խնձորներէ կտրած էր , բացուած վերջը ձիւթով ծածկեց . լաթով փաթթեց , ճեղքերը մանր սեպերով լեցուց և թողուց գնաց :

Խնձորենին խոթացաւ , բայց անիկա հիմա աւելի ուժեղ էր . այդ պատճառաւ ալ շուտով առողջացաւ և միացաւ օտար ճիւղին հետ : Օտար ճիւղը ուժեղ խնձորենւոյն հիւրը ծծեց և կը մեծնար արագ ու զուարթ : Բաղմաթիւ նորանոր կոկոններ , տերևներ , ոստեր ու ճիւղեր իրարու ետեւէ կ'արձակուէին , այնպէս որ երեք տարի ետքը ծառն կարմրախառն և անուշահոտ ծաղիկներով զարդարուեցաւ : Ծաղիկներուն կարմրադոյն քերթիկները թափեցան և անոնց տեղ երևցան փոքրիկ կանաչ մատուրներ որոնք քիչ քիչ մեծնալով՝ աչնան խնձոր դարձան , բայց ոչ վայրենի

Թթու խնձոր, այլ մեծ մեծ կարմրագոյն, անոյշ ու կակուղ: Եւ Խնձորենին այնպիսի՝ պատուական ծառ մըն էր դարձեր, որ ուրիշ այգիներէն կուգային ասոր շառաւիղները տանիլ պատուասաի համար:

Թելադրութիւններ. — 1. Ո՛ւր կ'աճէր վայրի Խնձորենին. — Թուչուններն ի՞նչ ըրին. — Գարնան ի՞նչ եղաւ. — Այգեպանն ի՞նչ ըրաւ. — Խնձորենին ի՞նչ կ'ըսէր. — Միւս տարին ի՞նչ ըրին. — Խնձորենին ինչո՞ւ խոթացաւ. — Ի՞նչպէս պատուական ծառ մը դարձաւ:

2. Բացատրել չեղագիրները. — Զրուցագրել հատուածը:

3. Որոշել բայերուն եղանակները:

### Գ Ի Ի Ղ Ա Յ Ի Ն Ե Ի Կ Ա Պ Ի Կ Ը

Հարուստ և տգեղ կոմսուհի մը կապիկ մը ունէր, որ քառշէ ոսկեճաւռուկ զգեստներով հագուած՝ տանը մէջ կը պտտէր: Օր մը ազարակի մը ծառան իր տիրոջը կողմէն կողով մը լեցուն պտուղ բերաւ կոմսուհիին: Երբ սանդուխէն վեր կ'ելլէր, կապիկին հանդիպեցաւ ու մարդ կարծելով բարե-

ւեց զայն: Կապիկը գուշակելով որ ուտելիք մը կար, տղան կեցուց և կողովին տերևները բանալով մէջը գտնուած թուղերը մէկիկ մէկիկ կերաւ: Նոյն միջոցին տան տիրուհին վրայ հասաւ: Այն ատեն ծառան ըսաւ. « Տիկին, տէրս ձեզի կը շրկէ այս կողովը որուն մէջ սերկեիլներ կան. թուղեր ալ կային, բայց ձեր որդին կերաւ զանոնք: »

Թելադրութիւններ. — Հարցումներով բացատրել չեղագիրները. — Զրուցագրել հատուածը. — Որոշել անուններն ու բայերը:

### ԽՈՇՈՐ ՏՈՔԹՈՐԸ ԵՒ ՓՈՔՐԻԿ ԳԻՒՂԱՑԻՆ

Անգլիոյ մէջ, լորս մը հացկերոյթի հրաւիրեր էր իր գաւառին աղնուականները և քանի մը օտարականներ: Ամենուն գլուխը տաքցեր էր: Շատ գէր ու խոշոր Ֆրանսացի բժիշկ մը սկսաւ ծաղրել շատ նիհար գաւառացի երիտասարդ մը որ իր գէմը նստեր էր: Շինականը բարկացաւ և պատասխանեց թէ հակառակ իր նիհարութեան կըրնար հետեւեալ օրը երեք անգամ ընդարձակ թաղի

մը շրջանն ընել, կռնակը առած ահագին Տոքթորը :  
 Բժիշկը ընդունեցաւ և յիսուն ոսկի գրաւ դրաւ :  
 Հետեւեալ օրը երիտասարդը իր խոստմանը համե-  
 մատ որոշեալ տեղը եկաւ ու յայտարարեց թէ  
 ինքը գրաւ դրեր էր բժիշկը կրելու բայց ոչ ըզ-  
 գեստները, ուստի պէտք էր հանուեր : Տոքթորը  
 նեղը մնաց և ստիպուեցաւ վճարել յիսուն ոս-  
 կին, որովհետև հանդիսականք իրաւունք տուին  
 գիւղացւոյն :

Թելադրութիւններ . — Հարցումներով բացատրել շե-  
 ղագիրները . — Զրուցագրել հատուածները . — Որոշել  
 անուններն ու սեռի ինչիւրները :

Պ Ժ Պ Ո Ղ Փ Ի Լ Ի Կ

Ա.

Արմանի ու զարմանք տիրեց Փիլիկին  
 Տրտունջ ու բողբոջ հանեց դէպ Երկին  
 Թէ կարգ ու կանոն արարածին մէջ  
 Շատ ծուռ ու մոռն են, խառնակ ու շիրոք :  
 — «Վեր նայեցէք ծառին խոշոր  
 Ուր կան փոքրիկ ընկոյզներ կլոր,

Իսկ բարակոյկ ցածուկ ոստին՝  
 Զմերուկներ մեծ, ահագին :  
 Ես Աստուծոյ տեղն ըլլայի,  
 Հակառակը կը գործէի :  
 Ինչ եւ իցէ, եղածն այս է :  
 Քեյճիս նայիմ, քունս եկած է,  
 Հանգչիմ քիչ մը առնեմ ես գոյ՝  
 Խաղաղ քաջեմ քուն անլորդոյ՝ :  
 Փիլիբ աղբոր քէյֆիկ տեղն էր,  
 Ի՞նչ էր պակաս, փորն իսկ կուշտ էր :


Բ.

Սակայն այս իր քեյճիկ լաւ  
 Քիթէն բերնէն շուտ եկաւ :  
 Յանկարծ մէկ ընկոյղ քա վերէն փրթաւ  
 Փիլիկի ճակտին շրախ մը զարկաւ :  
 Յատկեց իր տեղէն, ահա՛ իր ճակատ  
 Գտաւ կոսրսռած ու կարսիւր ներկած :  
 Հեկեկաց իսկոյն ու բազկատարած՝  
 — «Ուղիղ են, գոչեց, գործի քո, Տէ՛ր Աստուած,  
 Զի ձմերուկներն եթէ ըլլային  
 Իմ ուղածիս պէս՝ հոս վերեւ ծառին,

Գլուխս և ուղեղս ջախջախուած էին :

Աստուած իմ քեզի փա՛ռք ու պատիւ միշտ » :

Թելադրութիւններ . — Բացատրել շեղագիրներն ու գրուցագրել հատուածը :



### ՀԱԶՈՒԱԳԻՒՏ ԲԱՐԵԿԱՍՈՒԹԻՒՆ

Ղուկաս ու Մարկոս իրարու այնպէս հաւասարիմ քարեկամ էին որ մինչև անգամ պատրաստ էին իրարու հաւնար մեռնիլ : Գործն այնպէս բերաւ որ Մարկոս սլասիժ կրէ : Դատապարտեալը խնդրեց որ քանի մը օր չնորհուի իրեն՝ անձնական գործերը կարգի դնելու համար : Ղուկասը երաշխաւոր տուաւ : Որոշուած օրը կը մօտենար և դեռ չէր դարձած Մարկոս : Ամէնքը սկսան քաւքասել երաշխաւորն և զայն յիմար կը համարէին : Բայց որոշեալ օրը հասաւ Մարկոս : Դատարարը զարմացած ու հիացած անոնց հաւատարմութեան վրայ՝ իր վճիռը փոխեց :

Թելադրութիւններ . — 1. Որո՞նք էին իրարու հաւա-

տարիմ . — Մարկոսի ի՞նչ պատահեցաւ . — Երաշխաւորն ի՞նչ ըրաւ . — Դատաւորն ի՞նչ եւ ե՞րբ ըրաւ . — Այս հատուածէն ի՞նչ կրնանք սորվիլ :

2. Բացատրել շեղագիրները . — Ուղղագրել հատուածը :

3. Որո՞նք կ'ըսուի ստորագելի . — Ո՞ր բառերը ստորագելի են այս հատուածին մէջ :



### ԽՈՋԿԱՂՆԻՒՆ ԱՆԿՈՒՄԸ

Ամառուան մէջ տաք օր մը , Աֆիսը կաղնիի մը տակ քնացեր էր , երբ խոզկաղիկ մը ինկաւ իր սրածայր ցոռկիկ վրայ : Սարսափահար ցատկեց ելաւ ու փախաւ : Ճամբան մուկի մը հանդիպեցաւ . « Աստուած իմ , կաղնիի խոշոր ճիւղ մը ինկաւ վրաս » , ըսաւ ու մեկնեցաւ : Մուկը վազեց ճագարին քով գնաց , որ մերձակայ դաշտին մէջ կը ճարակէր . « Եղածը իմացա՞ր , ահագին կաղնի մը ինկեր է աքիսի մը վրայ » : Իրիկունը ճագարը գործը իր բարեկամներուն պատմեց . « Կ'երեւայ թէ , ըսաւ անոնց , կաղնին ահռելի գոռումով մը տապալեր է , որոտմանց ու փայլակներու մէջտե-

ղը : » Անծեղը այն տեղէն կ'անցնէր , լսեց , և գնաց  
ամէն տեղ շողակրատեց . « Ճշմարիտ դետնաշարժ  
մըն է եղեր , կ'ըսէր , աւա՛ղ , չեմ գիտեր թէ  
քանի՞ հոգի մեռեր է : » Հետեւեալ առտուն երկ-  
րին բոլոր անասունները այս զարհուրելի աղէտքին  
վրայ կը խօսէին :

Թելադրութիւններ . — Հարցումներով բացատրել շե-  
ղագիրները . — Զրուցագրել հատուածը . — Որոշել ա-  
նուններն ու բայերը :

### ԽԱԲԵԲԱՅ ՄԱՐԴՆ ԻՆՔ ԻՐ ԴԱՏԱԽԱՁՆ Է

Վաճառական մը ուղտապանի մը յանձնեց  
վեճախէ կծիկներ որ Հալէպէն կ. Պոլիս տանի ,  
ինքն ալ միասին ճամբայ ելաւ : Բայց ճամբան հի-  
ւանդացաւ և չկրցաւ հետեւի կարաւանին : Ուղ-  
տապանը կարծեց թէ վաճառականը մեռած է ,  
ծախեց մետաքսի կծիկներն ու փոխեց իր գրա-  
դումը : Վաճառականն ապափիւնեցաւ , եկաւ և եր-  
կար ատեն փնտռեց ուղտապանը : Վերջապէս գտաւ :  
Սա ուրացաւ : Վաճառականը դատարանի դիմեց :

Ուղտապանն այլ և այլ խօսքերով կ'աշխատէր ինք-  
զինք արդարացնել և կը պնդէր թէ երբէք ուղ-  
տապանութիւն չէ ըրած : Հանձարեղ դատարոր  
միջոց մը խորհեցաւ որ ուղտապանին խոստովանիչ  
տայ իր ստախօսութիւնը : Երկուքն ալ դատարա-  
նէն դուրս հանել տուաւ : Երբ քիչ մը հեռացան ,  
դատաւորը « Ուղտապան , ուղտապան , քեզի խօսք  
ունիմ » ըսաւ : Ուղտապանն իսկոյն ետ դարձաւ :  
Այն ատեն դատաւորը վճռեց որ ո՛չ միայն վճարէ  
մետաքսի գինը , այլ և սուտ երդումիւն համար  
սուգանք հատուցանէ :

Թելադրութիւններ . — 1. Վաճառական մը ի՞նչ յանձ-  
նեց ուղտապանի մը . — Ուղտապանն ի՞նչ ըրաւ . —  
Վաճառականն որո՞ւ դիմեց . — Դատաւորն ի՞նչ ըրաւ :

2. Բացատրել շեղագիրները . — Զրուցագրել հատ-  
ուածը :


3. — Որոշել յօդերը :

### ՀԱՐՈՒՍՏՆԵՐԸ ԵՒ ԱՂՔԱՏՆԵՐԸ

Ելնարանի մը ոճնարանները օր մը սկսան  
երարու հետ վիճաբանիլ : Վերինները գողոզու-

Թեամբ կ'ըսէին վարիններուն . « Ինքզինքնիդ մեզի հետ մի՛ բաղդատէք, դուք մեզի հաւասար չէք : Տեսէ՛ք, մենք ի՛նչ մաքուր ենք, մինչդեռ դուք աս ցեխին ու փոշիին մէջ թաթխուած ու աղտոտած էք . բնութիւնը ձեզմէ բարձր ստեղծած է զմեզ : » Իմաստուն մարդ մը՝ որ հոնկէ կ'անցնէր՝ այդ խօսքերը լսեց, ժպտեցաւ ու ելնարանը հակառակ կողմը դարձուց, այնպէս որ վերի ցայիկները վար իջան և վարինները վեր ելան : Այս առակը մեր կեանքին պատմութիւնն է : Անակնկալ դէպք մը կը բաւէ շատ անգամ մարդոց դիրքը տակնուվրայ ընելու : Կը պատահի որ հարուստները կ'աղքատանան և աղքատները հարուստներուն տեղը կ'անցնին :

Թելադրութիւններ . — Հարցումներով բացատրել շեղագիրները . — Զրուցադրել հատուածները . — Որոշել կանոններն ու բայերը :



### ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԿՈՒՂՂԷ ԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

Աշտո ժիր, արաւիս ու զարգացեալ էր : Շատ մը քերուքիւններ ալ ունէր, բայց ուսմամբ

ու կրթութեամբ սանձահարեց զանոնք . Արշակ ալ նախապէս քրաւիս ու ապուշ էր ու շատ մը թերութեանց տէր : Երբ զայն կը յանդիմանէին իր նախկին բնաւորութեանց համար, պատասխանեց . « Կրթութեամբ յաղթեցի բնութեանս, ասոր համար արհաւարհուելո՞ւ եմ ձեզմէ : Մարդ կը ծնի շատ քերի : Կաւնով, ջակնով, կրթութեանք կ'ուղղէ իր յոռի, տգեղ կողմերը : Վրաս ծիծաղելոյ, զիս յանդիմանելու և արհամարհելու տեղի չկայ », ըսաւ Արշակ :

Թելադրութիւններ . — 1. Աշտո ի՞նչպէս էր . — Արշակ . — Ինչո՞ւ կը յանդիմանէին զանիկա . — Ի՞նչ պատասխանեց . — Մարդ ի՞նչպէս կը ծնի . — Ի՞նչ կ'ընէ . — Արշակ ի՞նչ աւելցուց :

2. — Բացատրել շեղագիրները . — Զրուցադրել հատուածը :

3. Որոշել թէ՛ քանի տեսակ նախադասութիւն կայ :

4. Որո՞ւ կ'ըսուի բացայայտիչ . — Բացայայտեա՞լ .

— Որոշել թէ՛ որո՞նք են բացայայտիչներն ու բացայայտեալները :



Յ Ո Ւ Ս Ա Խ Ա Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

Իշխանի մը որդին օր մը գնաց շինականի մը քով միրգ ուտելու : Շինականն ահագին մեծութեամբ շողգաւ մը ներկայացուց : Իշխանը պարգևին համար շնորհակալ եղաւ շինականին և հրարանայեց հաղար դրուշ տալ անոր : Գիւղացիներէն մէկը լսելով իշխանին այս առատաձեռնութիւնը, յոյս ունէր որ ընտիր ձի մը եթէ ընծայ տանէր անոր՝ մեծ պարգեւներ պիտի ստանար : Գնաց պալատ . իշխանը ընդունեց անոր բերած ձին , գովեց և ըսաւ . « Բերէ՛ք շողգամս , ահա՛ ձեզի պարգև հազուագիւտ շողգամ մը որ այնքան պատուական է իր տեսակին մէջ , որքան ձեր բերած ընծան : Երթաս բարով , շատ շնորհակալ եմ : »

Թեյադրութիւններ . — 1. Իշխանի մը որդին ի՞նչ ըրաւ . — Ի՞նչ վճարեց շինականին . — Ի՞նչ յուսով շինականը ձի մը ընծայ բերաւ . — Իշխանագունն ի՞նչ ըրաւ . — Ի՞նչ բարոյական կրնաք քաղել :

2. Բացատրել շողագիր բառերը :

3. Ո՞ր բառերը անուն , ո՞ր բառերը բայ կը ցուցնեն . — Որոշել նիւթական — թանձրացեալ — վերացեալ անունները :

Ա Ռ Ս Ծ

Ձուրը գայ , շողացքն աղայ .  
Խենդն ուտէ , ելլէ խաղայ :

\* \* \*

Տգէտ ես ու խոնարհ եղա՛ր ,  
Գիտունի չափ պատիւ ունիս .

Գիտուն ես ու հպարտ եղա՛ր ,  
Տգէտի չափ պատիւ չ'ունիս :

Հ Ե Ջ Ա Շ Ո Գ Ի Ա Ն Ջ Ե Ր

Պաշտօնատար մը իր պաշտօնատան մէջ հասարակաց գործերու պարապած ըլլալով՝ անբարիշտ ու անզգաւ մարդ մը սկսաւ նախասեղ զայն : Պաշտօնատարը այս բանին համբերեց և չպատասխանեց : Մարդն իր նախատինքը շարունակեց : Պաշտօնատարը երբ իրիկունն անտարբերութեամբ տուն կը դառնար , նոյն անամօք մարդը անոր ետեւէն երթալով՝ ինչ նախատինք որ ըսես թախեց բերնէն : Իսկ պաշտօնատարը տուն մտնելով՝ հրամայեց իր ծառաներէն մէկուն որ ցանկը վառէ և այդ մարդն իր տունը տանի :

Թեյադրութիւններ . — 1. Ամբարիշտ մարդ մը ի՞նչ ըրաւ . — Պաշտօնատարը պատասխանեց . — Ի՞նչ ըրաւ .

— Այս հատուածէն ի՞նչ կրնանք սորվիլ :

2. Բացատրել շեղագիրները . — Զրուցագրել հատուածը :

3. Որոշել անցեալը , ներկան , անկատարը :

### Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Լերան ետև կէս հաց :

(Լուսիճ)

~~~~~

### Վ Ա Ր Դ , Կ Ա Կ Ա Չ

Իր գեղեցիկ սեւիկն ու անուշահոտութեան համար ծաղիկներու թագուհի կը կոչուի վարդն որ թուփերու վրայ կը բուսնի : Վարդին արմատները պինդ ու երկայն են , շագանակագոյն բունը ու կանաչ նորարոյս շառաւիղները մանր փուշերով շրջապատուած են : Վարդին տերեւները կըր բն , շուրջը սուր ատամներով : Ծաղիկները կարմիր կ'ըլան , երբեմն ալ ճերմակ ու դեղին : Մէկ թուփի

վրայ բոլոր ծաղիկները միեւնոյն գոյնը կ'ունենան : Մեծ վարդեկները անթիւ գնրածաւ կոկոններ ունին :

Կակայը պարտէզի գեղեցիկ ծաղիկ մըն է , բայց հոտ չունի : Սոխին արմատէն կը բուսնի անիկա , կոճղեղը հողին մէջ թելի նման մանր ծիղեր կ'արձակէ : Յեղունին վրայ կը բացուի զանգակի նման ծաղիկ մը : Կակաչները դեղին , կարմիր և գոյնզգոյն կ'ըլան :

Թեյադրութիւններ . — 1. — Վարդն ի՞նչ կը կոչուի . — Կրնա՞ք նկարագրել վարդը . — Կակա՞չը :

2. Բացատրել շեղագիրները . — Զրուցագրել հատուածը :

3. Որո՞ւ կ'ըսուի յօդ . — Կրնա՞ք որոշել յօդերը :

4. Որո՞ւ կ'ըսուի յարաբերական դերանուն . յարաբերեա՞լ . — Որոշել յարաբերականն ու յարաբերեալը :

### Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Աստուած շինեց

Մարդը քակեց :

(Խաղող)

~~~~~

### ԾԱՂԻԿՆԵՐՈՒՆ ԵՐԳԸ

#### Վ Ա Ր Դ

Ձիս ամէն մարդ կը կոչէ  
 Ծաղիկներու թագուհի,  
 Որովհետև իմ ծաղիկս  
 Սիրուն գոյն ու հոտ ունի :  
 Թէև կանաչ իմ թուփը  
 Շատերու ձեռքը կը ծակէ,  
 Բայց այս անմեղ յանցանքը  
 Ինձ ամէն մարդ կը ներէ :

#### Շ Ո Ւ Շ Ա Ն

Իմ սպիտակ կոկոնի  
 Մէջ կան բուրմունքի շատ ու շատ,  
 Ոսկեանման նուրբ փոշի  
 Մեղուներու բազմաշխաս :  
 Իմ ցողունս է խիստ բարակ  
 Եւ գազաթօ գեղեցիկ,  
 Տերեւներս ընդարձակ,  
 Իսկ ես ինքս շատ հեզիկ :

Թերթերուս մէջ հիւրասէր  
 Թիթեռ, մեղու և մրջիռ  
 Հանգիստ կարող են գտնել,  
 Ձերթ բարեկամ իմ սիրուն :

- Թելադրութիւններ. — 1. Բացատրել շեղագիրները .  
 — Ձրուցադրել հասուածը :  
 2. Գտնել յօդերը :  
 3. Ե՞րբ և, ե՞րբ ը կը գնենք :

#### Բ Ո Յ Ս Ե Ր Ը

Բոյսերը կ'ապրին, կեանք ունին : Հունատ  
 յառաջ կուգայ բոյսը . կ'աճի հողէն սնունդ քա-  
 ղելով, և օր մըն ալ կը ծերանայ ու կը ջնջուի :  
 Բոյսերուն կազմուածքը սապէս է . Հողին մէջ  
 մաս մը ունին որ արմատ կը կոչուի, արմատէն  
 վեր հողին վրայ կանգնած մասը ցողուն կ'ըսուի,  
 ցողունին ու անոր ճիւղերուն վրայ տերեւներ կան,  
 ծաղիկը կը գտնուի տերեւներուն մէջ տեղ :  
 Խոշոր տունկերը կը կոչուին ծառ, ինչպէս իւրև-  
 ճորեանի, աւելի պզտիկները թուփ՝ ինչպէս վար-

դեմի: Թուփերունն ու ծառերունն բունը դրսէն հաստ կեղև մը ունի. անկէ ներս է փայտը որ տարիքին համեմատ հաստ կ'ըլլայ. կեդրոնը կա- կուղ է և ուղեղ կը կոչուի: Երբ բուն մը լայնքէն կտրենք, կեդրոնին բոլորտիքը փայտը խաւ ի խաւ կազմուած պիտի տեսնենք. այդ խաւերը՝ այսինքն թուխ գիծերը համրելով ծառին տարիքը կրնանք գիտնալ:

Բոյսերը արմատներով, ցողունով ու տե- րեւներով շնչառութիւն կ'ընեն:

**ԲՈՅՍԵՐԸ ՍԱ ԲԱԺԱՆՈՒՄՆ ՈՒՆԻՆ**

Ժաղիկ բացողներ } Երկբլթակներ՝ շուրխա  
Միաբլթակներ՝ ցորեն  
Ժաղիկ չբացողներ Սունկ

Բոյսակ. երբ լուբիայի հունտը քննենք, կը տեսնենք որ հունտը մաշկով մը պատած է, մաշկը վերցնելով՝ կունենանք երկու կէս լուբիա որոնք իրարու կցուած են մասով մը: Երկու կէսերը կը կոչուին բոյսակ, զանոնք կցող մասն ալ սաղմ, հունտին այս մասն է սաղմն որ երբ ծլի՝ արմատի, ցողունի ու տերևի կը փոխուի: Մէկ բլթակ ունե-

ցողը կը կոչուի միաբոյսակ՝ ինչպէս ցորեն, ար- մաւ, երկու բլթակ ունեցողներն ալ երկբոյսակ, ինչպէս նուշ, կաղին, ևլն:

**ԲԱՆՋԱՐԱՆՈՅԻ ԲՈՅՍԵՐ**

Բանջարեղէններէն շատերուն արմատը կ'ու- տուի՝ ինչպէս շոդգամ, ստեպոյիս, կանկառ, բողկ, ոմանց տեսակները եփելով կ'ուտենք՝ ինչպէս կա- դամբ, շոմոն, պրաս, շատերն ալ առանց եփե- լու կ'ուտենք՝ ինչպէս ազասգեղ, եղեղ, հազար, որոնցմէ աղցան կը շինուի:

Կան ուրիշ բանջարեղէններ ալ որոնց հատիկ- ները կ'ուտուին՝ ինչպէս շուրխա, սիսեռ, ոսպ, մաշ:

**ՅՈՐԵՆԸ, ԳԵՏՆԱԽՆՁՈՐԸ**

Յորենը մարդոց սնունդին համար ամենէն կարևոր հացաբոյսն է: Յորենը կը ցանուի կա՛մ աշնան վերջերը կա՛մ գարնան սկիզբները: Գարնան ցորենը կ'աճի, ամառ ատեն կը հասուննայ, հաւ- կեր կը կապէ: Ամառ ատեն հասկերը կը դեղնին, ցորենին հատիկները եղած են. կը հնձեն զանոնք և կը ժողվեն շտեմարաններու մէջ:

Յորենի հասկերը կային մէջ կը ծեծեն, յարդը կը զատուի հատիկներէն : Յորենը ջրաղացին մէջ կ'աղան և ալիւր կը պատրաստեն : Ալիւրը բարակ մաղէ կ'անցնեն, թելիր կ'ելլէ : Բարակ ալիւրէն հաց կը պատրաստուի :

Գետնախնձորն ալ շատ կարևոր տունկ մըն է, աչնան արմատները հողին տակէն կը հանեն, չոր ու մութ տեղեր կը դիզեն :

**ԲԺՇԿԱԿԱՆ ԲՈՅՍԵՐ, ԹՈՒՆԱՒՈՐ ԲՈՅՍԵՐ**

Բժշկական բոյսեր անոնք են որ իբր դեղ կը գործածուին՝ ինչպէս անանուխ, մոլոշ, տոլոս : Ասոնք կը ժողվեն, կը չորցնեն, յետոյ կը խաշեն ջուրը խմելու համար, կամ կը փշրեն փոշին գործածելու համար :

Բոյսեր ալ կան որ թոյն կը պարունակեն . ասոնց կ'ըսուի թունաւոր բոյսեր՝ ինչպէս մոլեխիկ, շանչոյիկ, ևլն :

Բուրաստանի մէջ կը մշակուին յարգի ծաղիկներ՝ վարդ, շահպրակ, մանիշակ, շահոկրամ, շուշան, յակիկ, կակայ, ֆրոնս, նարգիս :

Թելադրութիւններ, — Որո՞ւ կ'ըսուի յատկացուցիչ . — Յատկացեալ . — Որոշել յատկացուցիչներն ու յատկացեալները :



**ՅԻՍՈՒՍԻ ՈՏՆԼՈՒԱՆ ԵՒ Ս. ԸՆԹՐԻՔԸ**

Բաղարջակերաց առջի օրը Յիսուս Երուսաղէմի վերնաստունը Չասկի գառը իր աշակերտներուն հետ կերաւ . Յետոյ մէջքը դեղնակ մը փաթթեց, կոնֆիս մէջ ջուր լեցուց, և սկսաւ իր աշակերտներուն ոտքերը լուալ ու փաթթուած զենջակովը սրբել : Վերջը դարձեալ սեղան նստաւ և ըսաւ . « Ուզեցի որ յարչարուելիս առաջ այս զսիկը ձեզի հետ ուտեմ . Գիտեմ որ ձեզմէ մէկը զիս պիտի մասնէ : Անոնք սկսան տրամիլ և մի առ մի ըսել . « Միթէ ե՞ս եմ » : — Ան՝ որ ինծի հետ ձեռքը պնակը տարաւ՝ զիս պիտի մատնէ » :

Ասիկա Յուդան էր որ ըսաւ . « Վարդապետ , միթէ ե՞ս ե՛մ » : Յիսուս ըսաւ . « Դո՛ւն ըսիր » : Յուդա դուրս ելաւ , գիշեր էր , և գնաց մատնեց Յիսուսը :

Եկան Յիսուսը նախ Աննա Բահանայայտեսին և յետոյ Կայիափա Քահանայապետին տարին : Ժողովականները Յիսուսի դէմ սուտ վկայութիւններ կը փնտռէին որ զայն մեռցնեն , բայց չգտան : Վերջը զրկուեցաւ Պոնտացի Պիղատոս Կուսակալին : Ասիկա հրամայեց որ չարչարեն ու խաչեն Յիսուսը :

Թելադրութիւններ . — 1. Յիսուս ե՞րբ եւ ո՞ւր կե-  
րաւ Զատիկ գառը . — Ընթրիքէն ետքը ինչե՞ր ըրաւ . —  
Ի՞նչ ըսաւ . — Ո՞վ մատնեց Յիսուսը . — Մատնութենէն  
ետքը ի՞նչ ըրին Յիսուսի :

2. Բացատրել շեղագիր բառերը . — Հատուածը ուղ-  
ղադրել :

3. Ենթական ի՞նչ հարցումով կը գտնէք . — Որոշել  
ենթականերն այդ հատուածին մէջ :

### Ս. ԹԱԴԷՈՍ ԵՒ Ս. ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ

Հայերը երկար աւելն փութերու և կուռփերու ազդեցութեան տակ մնացին , մինչև որ Քրիստոսի Համբարձումէն ետք թադէոս Առաքեալը Հայոց քրիստոնէութիւն քարոզեց Քրիստոսի 34 թուականին : Թադէոս ուրիշ տեղեր ալ պիտի երթար քարոզելու , ուստի խոյրարար Ադգէ անուն անձը եպիսկոպոս ձեռնադրեց և անցաւ գնաց Ս. Աբգարու փեռորդի Սանատրուկին քով և զոյն ալ իր հետեւորդներով քրիստոնեայ ըրաւ , մկրտեց : Նոյնպէս և Սանատրուկի աղջիկը Ս. Սանդուխտ : Սանատրուկ վերջը ստիպեց իր աղջիկը որ ուրա-  
նայ նոր կրօնքը , բայց ան չ'հնազանդեցաւ՝ ըսե-  
լով . « Ես կուռք չեմ պաշտեր , կը մեռնիմ կուռք չեմ պաշտեր » : Հայրն իր աղջիկն ու թադէոս Առաքեալը նահատակեղ տուաւ :

Թադէոսի մահէն ետք , Յիսուսի առաքեալնե-  
րէն Բարթուղիմէոս առաքեալն եկաւ Հայոց մէջ  
ու քրիստոնէութիւնը քարոզեց : Իր հետը բերաւ  
Ս. Կոյսիկ պատկերը : Տիգրիս գետին եզերքը վանք  
մը շինեց Աստուածածնի անունով և այն պատկերը


հոն դրաւ : Ս. Թաղէոս և Ս. Բարթուղիմէոս մեր  
նախկին շուսաւորիյներն են :

Թելադրութիւններ . — 1. Նախորդներուն նման թե-  
լադրել :

2. Բացատրել շեղագիրները . — Հատուածն ուղղա-  
գրել :

3. Որոշել անուններու եզակին ու յոգնակին :

4. Որոշել հոլովներու տեսակները :



### Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ

Հայոց շուսաւորութեան ու հաւաստի հայրն է  
Սուրբ Գրիգոր : Եւթազ անունով մէկը զինք կեաւ-  
րիս տարաւ : Հոն մկրտուելով՝ Գրիգոր կոչուեցաւ  
և փերմիլիանոս Եպիսկոպոսին տեսչութեան տակ  
ֆրիսոնէութեան ու գիտութեանց մէջ կրթուե-  
ցաւ : Երկու որդի ունեցաւ՝ Վրթանէս ու Արիստա-  
կէս : Դառն տանջանքներով ու լուսաւոր վարդա-  
պետութեամբ կուսպաշտ Հայերը քիչ ատենէն  
քրիստոնեայ ըրաւ , 301ին : Այս միջոցին նահա-  
սակուեցան Ս. Հովիտիմէան կուսանք : Կեսարիոյ

Ղեկնդիոս Եպիսկոպոսէն Հայոց Հայրապետ ձեռ-  
նադրուելէն ետք , Ս. Գրիգոր գրեթէ 25 տարի  
նորադարձ հօտը իմաստութեամբ կառավարեց :  
Վերջապէս ծերութեան պատճառաւ Հայ Եկեղե-  
ցոյ հոգեւոր իշխանութիւնը յանձնելով իր Ա-  
րիստակէս որդւոյն՝ Մանեայ այրը առանձնացաւ  
և հոն վախճանեցաւ 325ին :

Մեր լուսաւորիչը կը տեսնեմք տարին երեք  
անգամ՝ Մուսն ի Վիրապն , Ելն ի Վիրապէն ,  
Գիւտ Նշխարաց :

Թելադրութիւններ . — 1. Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հա-  
յոց ի՞նչն է . — Ո՞ւր տարուեցաւ . — Ի՞նչ տեսակ կրթ-  
ութիւն ստացաւ . — Հայերն ե՞րբ քրիստոնեայ դար-  
ձուց . — Ի՞նչեր կրեց . — Այն միջոցին որո՞նք նահա-  
սակուեցան . — Ե՞րբ Մանեայ այրը քաչուեցաւ . — Ե՞րբ  
վախճանեցաւ . — Քանի՞ անգամ կը տօնենք Ս. Գրիգորը :

2. Բացատրել շեղագիրները . — Զրուցագրել հատ-  
ոտածը :

3. Բայը քանի՞ ժամանակ ունի . — Ո՞րն է անցեալ  
կատարելը . — Որոշել անցեալ կատարելիները :

4. Որո՞ւ կ'ըսուի բացայայտիչ . — Որոշել բացայայ-  
տիչներն ու բացայայտեալիները :

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

ԴՊՊԱԼ մը ներկ է  
Աշխարհ կը ներկէ :  
(Արեւ)

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻ

Մեծն Ներսէսի որդին էր Ս. Սահակ Պարթեւ  
Հայրապետը որ Կ. Պոլսոյ մէջ ծնաւ : Իր հօրը հո-  
գաժոթեալք շատ զարգացաւ և իր ժամանակա-  
կից գիտուններէն մէկն եղաւ : Կղերականութիւնն  
ընդունեց ու Հայոց բարիք ընելու նպատակաւ քովն  
աշակերտներ ժողվելով՝ սկսաւ անոնց ուսումնական  
ու բարոյական կրթութեանը պարապիլ : Իրեն կ'աշ-  
խատակէր Ս. Մեսրոպ Մաշքոց Վարդապետ  
որ Ս. Մեծն Ներսէսի աշակերտներէն էր ու ման-  
կութենէն կը ճանչնար : Ս. Սահակ Կաթողիկոս 50  
տարի վարեց կաթողիկոսութիւնը : Ս. Մեսրոպ Ս.  
Սահակին հետ Հայոց լուսաւորութեան աշխատիլ  
սկսաւ : Մինչև այն ատեն Հայ եկեղեցիներու մէջ  
տեղ մը Ասորերէն , տեղ մը Յունարէն կը կար-

դացուէր , հայերէն գիր չըլլալուն համար : Ս. Մես-  
րոպ և Ս. Սահակ ուրիշ գիտուններու ձեռնառու-  
թեամբ երկար ատեն աշխատելէ ետք , վերջապէս  
գտան , 404ին , Հայոց գիրը : Ս. Սահակի , Ս. Մես-  
րոպի ու իրենց աշակերտներուն ձեռքով հայերէնի  
քարգնանուեցաւ Ս. Գիրքը : Այս երկու սուրբերն  
ալ Հայ եկեղեցւոյ Ժամերդարիւնը ճոխացուցին :

Թեյադրութիւններ . — 1. Որո՞ւն որդին էր Ս. Սա-  
հակ Պարթեւ . — Ի՞նչպիսի մէկն եղաւ . — Ինչո՞ւ կղե-  
րական եղաւ . — Ո՞վ էր իր օգնականը . — Ի՞նչի սկսան  
աշխատիլ . — Ե՞րբ գտան Հայոց գիրը . — Ի՞նչը հայե-  
րէնի թարգմանեցին . — Ի՞նչը ճոխացուցին :

2. Բացատրել շեղագիրները . — Հատուածը զրու-  
ցագրել :

3. Գտնել բայերուն անցեալ անկատարը :

4. Որո՞ւ կ'ըսուի բացայայտիչ . — Բացայայտեա՞լ .  
— Որոշել բացայայտիչներն ու բացայայտեալները :

5. Քանի՞ տեսակ հոլովմունք կայ . — Որո՞նք են  
կանոնաւորները . — Անկանոնները . — Որոշել անկա-  
նոն հոլովմունքները :

ՏՕՆ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԷԶՄԻՍՏՆԻ

Հոգեգալուստէն ետքը Բ. կիրակին կը տօնուի Հայոց առաջին եկեղեցւոյ հիմնարկութիւնը Էջմիածնի մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով 303ին, որուն հազար վեցհարիւրամեակը մեծ հանդեսներով տօնեցինք 1903ին : Այս տօնը մեծ նշանակութիւն ունի ո՛չ միայն Հայոց եկեղեցական պատմութեան մէջ, այլ նաև բովանդակ փրիստոնէական եկեղեցւոյ պատմութեան մէջ : Հայոց եկեղեցին արևելեան քրիստոնէութեան ամենէն հին հաւատարիմ հաստատութիւններէն է և պահպանած ու տարածած է քրիստոնէութիւնը իւր շրջակաները : Այս տօնը կը կատարուի Ս. Գրիգոր Լուսաւորչի « ԵՆԻ ՎԻՐԱԿԷՆ » տօնէն մէկ օր ետքը : Այդ օրը կ'երգենք « Էջ Միածինն ի հօրէ » շարականը զոր ամէն Հայ փրիստոնեայ գոց դիտնալու է :

- Թելադրութիւններ . — 1. Ե՛րբ կը տօնենք Հայոց առաջին եկեղեցւոյ հիմնարկութիւնը . — Ի՞նչ նշանակութիւն ունի . — Ո՛րն է ՚ին հաւատարիմ հաստատութիւնը . — Այդ օրն ի՞նչ շարական կ'երգեն :
2. Բացատրել շեղագիրները . — Զրուցագրել հատուածը :
3. Որոշել նախագրութիւնները :

Ա. Ռ. Ա. Ծ

Կրակն որ Աստուած վառէ՝  
 Մարդս մարել չէ կարող .  
 Ճրագն որ Աստուած մարէ՝  
 Մարդս վառել չէ կարող :

Գ Ա Ր Ո Ւ Ն

Գարունն եկաւ զուարթ դէմքով  
 Լեցուց դաշտերն հազար բերրով,  
 Գարի, վարսակ, ցորեն ունինք,  
 Ա՛լ ի՛նչ կ'ուզենք, պէտք է հրճուիմք :

Այժ ու ոչխար, հաւ, սագ ու բաղ,  
 Գիրուկ կովեր որ տան մեզ կաթ,  
 Մեր տարեկան պարէնն ունինք,  
 Ա՛լ ի՛նչ կ'ուզենք, պէտք է հրճուիմք :

Զմրան համար տաք հանդերձանք  
 Կ'ըլլան մեզի բուրդն ու քանքանակ .  
 Շերամ, մետախ, զարդեր ունինք,  
 Ա՛լ ի՛նչ կ'ուզենք, պէտք է հրճուիմք :

Ահա պատրաստ ճաշ գեղջկական,  
 Ուտենք համով մեր հացն ու թան .  
 Կարագ, մածուն հաւկիթ ունինք,  
 Ա՛լ ի՛նչ կուզենք պէտք է հրճուինք :

Թելադրութիւններ . — Բացատրել շեղագիր բառերը .  
 — Թելադրութեամբ գրել հատուածը :

Ա. Ռ. Ա. Ծ

Դուն թէ գիտես հազար բան՝  
 Մէկ գիտցողին բան հարցուր,  
 Գուցէ առնես պատասխան  
 Բու հազարէդ նոր ու սուր :

ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿ

Չորս ընկեր են, բոլոր տարին  
 Երկրին վրայ կը պալտին .  
 Չորսն ալ ունին զատ զատ հասակ,  
 Պարգևնին է հազար տեսակ :

Սոցիսեկն է մէկ պատանի,  
 Բողբոց, սերել, սաղարթ ունի,  
 Կայտառ արև, կանանչ արօժ,  
 Որոնց տղաք են միշտ կարօտ :

Երկրորդ ընկերն՝ երիտասարդ՝  
 Կուտայ մեղի անձրև առատ,  
 Ծաղիկ ցանէ ան ամէն դի,  
 Յոյսեր կուտայ առատ հունձքի :

Երրորդ ընկերն՝ այր յախահաս՝  
 Միրգով լեցուն ունի մի թաս .  
 Կը բաժնէ նա տղոց իր գանձ՝  
 Ծիրան, խնձոր, խաղող ու տանձ :

Չորրորդ ընկերն է ծերունի,  
 Տուրտ ու խաւար շաղկաժ ունի,  
 Այգի անտառ ամայացած,  
 Դաշտ ու արօտ ձիւնով լեցուած :

Թելադրութիւններ . — Շեղագիրները բացատրել . —  
 Զրուցագրել հատուածը :

Չ Գ Ա Յ Ա Ր Ա Ն Ք

Հինգ զգայարանք. — Մարդ ունի հինգ զգայարանք՝ տեսանելիք, լսելիք, հոտոնելիք, ճաշակելիք, շոշափելիք:



ՏԵՍՍՆԵԼԻՔ = ՏԵՍՈՂՈՒԹԻՒՆ

Այժ. — Տեսողութեան գործարանն է այժ. Առջևի կողմէն դիտենք աչք մը, կը տեսնենք որ անիկա փոքրիկ գնդակի մը կը նմանի, և կը շարժի վեր վար, աջ ու ձախ, արտեաններու ներքև: Աչքին մէջ կը տեսնենք սպիտակ մաշկի մը որ կը կոչուի սառնեցնի. ասոր մէջտեղ կը գտնուի կլոր մաս մը թուխ կամ կապոյտ՝ որ կը կոչուի ծիածան, իսկ ծիածանին կեդրոնը կը գտնուի ուրիշ փոքրիկ կլորաձև մաս մըն ալ՝ բիր: Արտեաններու եզերքը քարթիյներ կան: Յօնքն ալ աչքին վերևը մազերէ բաղկացած աղեղ մըն է որ կ'արգիլէ ճակտէն հոսող քրտինքը աչքին մէջ երթալէ:

Տեսողութիւն. — Լոյսը բիբին մէջէն կ'անցնի

և աչքէն ներս կը մտնէ, աչքին ներսի կողմը կը գտնուի խոշոր ջիղ մը որ կը կոչուի տեսողական ջիղ: Դուրսի առարկաներէն եկող լոյսը բիբէն ներս կը մտնէ և կը հասնի տեսողական ջիղին որ առարկաներուն տպաւորութիւնը, այսինքն աչքին տեսածը կը հաղորդէ ուղեղին:

Ճ Ա Շ Ա Կ Ե Լ Ի Ք

Լեզու. — Ճաշակելիքի գործարանն է լեզուն, որուն վրայ փոքրիկ ցցուածքներ կը տեսնենք, երբ նայինք: Ջիղերուն բարակ թելերուն ծայրերը այս ցցուածքներուն մէջ կը գտնուին. ասոնք համի տպաւորութիւնը կ'առնեն կը տանին ուղեղին:

Անուշ, լեղի, կծու, թթու, թթուաշ, աղի համեր կան, լեզուն ու քիմքը կը զգան այս համերը:

Թելադրութիւններ. — 1. Մարդ քանի՞ զգայարանք ունի. — Ո՞րն է տեսողութեան գործարանը. — Ինչի՞ կը նմանի. — Աչքին մէջ ի՞նչ կայ. — Տեսողութիւնը ի՞նչպէս կը կատարուի. — Ո՞րն է տեսողական ջիղը. — Դուրսի առարկաները ի՞նչպէս կը տպաւորուին մեր մէջ. — Ո՞րն է ճաշակելիքի զգայարանքը. — Ի՞նչպէս համի տպաւորութիւնը կ'առնենք. — Քանի՞ տեսակ համ կայ. — Որո՞նք կը զգան այս համերը:

2. — Բացատրել շեղագիրները . — Զրուցագրել հատուածը .

3. Որոշել ածականները եւ վերացեալ ու թանձրացեալ անունները .



Շ Օ Շ Ա Փ Ե Լ Ի Ք

Շօշախելչիք. — Իրաւ է որ մեր մարմինն բոլոր մորթերը, այսինքն մեր ամբողջ մորթը կրնայ շօշափել և զգալ, բայց ամենէն շատ զգայուն են մատներուն ծայրերը : Մատի մը ծայրով աւելի լաւ կը հասկնանք թէ զմելի մը սո՞ւր է թէ ոչ քան այն մատի ետեւի կողմով :

Շօշափելիքով կը զգանք բանի մը տաք կամ պաղ, թաց կամ չոր, կարծր կամ կակուղ, ողորկ կամ դերբուկ, հեղուկ կամ հաստասուն, փոքր կամ մեծ ըլլալը :

Մագ. — Մորթին վրայ տեղ տեղ ստել կը բուսնի . մագ կը կոչուի երկայն ստեր : Գանկին մորթին վրայ առատ մազեր կան :

Մազերը, ստեները շարունակ կ'աճին, կ'երկարին մորթին մէջտեղէն դէպի դուրս :

Քրօսիմֆ. — Մորթը ծակոտկէն ըլլալով՝ անոր ծակերէն ներս օդ կը մտնէ ու կ'երլէ . այս ալ մորթին շնչառութիւնն է : Երբ շատ տաքնանք՝ մորթին ծակերէն դուրս կը հոսի ջուր մը որ քրօսիմֆ կը կոչուի :



Հ Ո Տ Ո Տ Ե Լ Ի Ք

Քիթը. — Հոտոտելիքի գործարանն է քիթը . ասոր ներսի կողմը տարածուած են զգացող ջիղերն որք հոտը կը զգան : Հոտը հոտաւէտ մարմիններու ոգին է, որ օդին մէջ կը գտնուի ցան ու ցիր : Ասիկա երբ ունեցերէն ներս կը մտնէ, զգացող ջիղին վրայ կ'ազդէ :

Քիթին երկու ծակերը ոռնկ կը կոչուին . Քիթը ներսէն կոկորդին վրայ կը բացուի, այդ տեղը կը կոչուի քիթի խորշ : Քիթէն ընելու է շնչառութիւնը . բերնով շնչելը վնասակար է ձմեռը :



Լ Ս Ե Լ Ի Ք

Ականջ. — Լսողութեան գործարանն ականջն է : Ականջին արտաքին մասը կը կոչուի բաւիղ : Անոր մէջտեղի ծակը կը կոչուի ականջի արտաքին խողովակ , որուն խորը գոցած է թմբկամաշկը : Թմբկամաշկէն անդին ականջին ներքին մասն է , ուր կը գտնուի շտղակիան ջիղն որ կը զգայ : Լսողական ջիղն իր տպաւորութիւնը կը հաղորդէ ուղեղին :

Երկու ականջները դէմքին երկու կողմերը կը գտնուին :

Ձայն. — Խոչակն է ձայնի գործարանը , որ կը գտնուի շնչափողին սկսած տեղը , կոկորդին ստորոտը , ստուգին առջևը : Խոչակին մէջ բարակ երկու մաշկեր կան որոնք կը կոչուին ձայնաշար : Երբ ձայն հանել ուզենք , ձայնալարերը կը տարածուին խոչակին մէջ : Շնչուած օդը զանոնք կը թրթռացնէ և ահա ձայն կ'ելլէ :

Թելադրութիւններ . — Նախընթացին նման թելադրել :

Ձ Ղ Ա Յ Ի Ն Դ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ձգայութիւն. — Երբ մատերնիս կրակին մօտեցնենք , կը զգանք որ մեր մորթը կ'այրի : Երբ արևուկնիս գրասեղանին վրայ դնենք , դիմադրութիւն մը կը զգանք : Երկու պարագաներուն մէջ ալ զգայութիւն մը կը կրենք :

Զիդերը , ողնուղեղը , ուղեղը մեր մարմնոյն զգայութիւն ընդունող մասերն են :

Զիդ , ողնուղեղ . — Շնչերակներու և երակներու քովերէն ամբողջ մարմնին մէջ տարածուող ամենէն բարակ թելերը կը կոչուին ջիղ : Գրեթէ բոլորը կուգան կը միանան չուանի մը պէս երկար , սպիտակ ծուծի մը վրայ որ ողնուղեղ կը կոչուի : Ողնայարի'ն մէջ կը գտնուի ողնուղեղը :

Ողնեղ . — Ողնուղեղին վերի մասը խոշոր զանգուած մըն է որ դուրած է գանկին մէջ և կը կոչուի ողնեղ :

Զիդերը և ողնուղեղը իրենց ընդունած բոլոր զգայութիւնները կը հաղորդեն ուղեղին : Ուրեմն մեր մարմինը ինչ որ զգայ , ուղեղն է որ կ'ամփոփէ անոր բոլոր զգացածները :

Ասկէ զատ ուղեղէն է որ կ'սկսին բոլոր մեր շարժումները , այսինքն ձեռքերնիս վեր կը բարձրացնենք , կը քալենք , կը վազենք , կը խաղանք :

Ուղեղը , ողնուղեղը և բոլոր ջիղերը կը կազմեն Զղայիկն դրուքիւնը :

Թելադրութիւններ. — 1. Ե՞րբ զգայութիւն կը կրենք . — Որո՞նք են զգացողութիւն ընդունող մասերը . — Որո՞նք կը կոչուին ջիղ . — Ո՞րն է ուղեղը . — Ողնուղե՞ղը . — Զիղերն ու ողնուղեղը ի՞նչ կ'ընեն . — Ուղեղը ի՞նչ կ'ընէ . — Որո՞նք կը կազմեն Զղայիկն դրութիւնը :

2. Բացատրել շեղագիրները . — Ուղղագրել հատուածը :

3. Որոշել ենթականերն ու բայերը :

Շ Ն Չ Ա Ռ Ո Ի Թ Ի Ի Ն

Մարդ ապրելու համար պէտք է որ շունչ առնէ , այսինքն օդը պէտք է որ քիթէն ու բերնէն ներս մտնէ ու դուրս ելլէ . ատոր կ'ըսուի շնչառութիւն : Եթէ րեւաննիս ու ֆիթերնիս բոլորովին գոցենք , քանի մը վայրկեանէն անշունչ կը խեղդուինք : Շնչառութեան միջոցաւ կը մաքրուի արիւնը :

Շնչառութեան գործարանն երկու քոֆերն են : Թոքերը երկու խոշոր , շատ կակուղ ու վարդի գոյնով պարկերու կը նմանին . դրուած են կուրծքին մէջ , սրտին աջ ու ձախ կողմերը :

Երբ շունչ առնենք , օդը քիթէն կամ բերնէն ներս մտնելով՝ կոկորդէն , խոչակէն , շնչափողէն ու ցնցողներէն անցնելէ ետքը , կը լեցուի թոքերուն մէջ . այն ատեն կուրծքին վարի կողմը կ'ուռի :


Թելադրութիւններ . — 1. Ինչո՞ւ շունչ կ'առնենք . — Ի՞նչպէս շունչ կ'առնենք . — Ե՞րբ անշունչ կը խեղդուինք . — Որո՞նք են շնչառութեան գործարանները . — Ինչի՞ կը նմանին թոքերը . — Ի՞նչպէս շունչ առնելու է :

2. Բացատրել շեղագիրները . — Զրուցագրել հատուածը :

3. Որոշել թէ ո՞րը անուն , ո՞րը բայ կը ցուցնէ :

Ա Ռ Ա Ծ

Աստուծոյ իմաստութիւնը կը տեսնուի ամէն բանի մէջ :



### ԱՌԱՆՑ ՁԻՈՒ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

Մարդ անբաւական համարեց ձիով ու սայլակով ճամբորդելը թէ՛ ճամբէն և թէ՛ խճողիւններէն . սկսաւ մտածել ուրիշ ճար գտնել և հնարեց երկաթուղին :

Սարեր քանդեց, դաշտեր հաւասարեցուց, կաւնուրջներ ձգեց և սլաքի նման ուղիղ ճամբայ շինեց, այնպէս որ կարծես թէ կտոր մը կտաւ էր փռուած : Այս կտաւին վրայ կը ձգէ անիկա երկաթէ շաւիղներ, իսկ շաւիղներուն վրայ կը դնէ երկաթէ մեքենայ մը որուն մէջ կայ հնոց, կաթսայ և ծխհան : Հնոցին մէջ փայտ կամ ածուխ կը դնէ, անով ջուրը կ'եռայ և շոգւոյն զօրութեամբ մեխենան կը գլորի առանց ձիու, բայց


այնքան արագ որ մարդ ո՛չ մէկ ձիով կրնայ անոր ետեւէն հասնիլ : Շոգեմեքենան կը թռի երկաթուղիին վրայէն, կը ճչէ, կը սողի, երբէք չ'յողնիր, միայն իջեաններէն ածուխ և ջուր կ'առնէ : Իր ետեւէն կը քաչէ բազմաթիւ կառքեր, շատերուն մէջ նստած են հարիւրաւոր մարդիկ և լուսամուտէն դուրս կը նային, իսկ միւսներուն մէջ այնքան ապրանք լեցուած է որ մարդ կը զարմանայ :

### Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Քարին զարնեմ՝ չկտորի,  
Ջրին զարնեմ՝ կը կտորի :

(Թուղթ)

Էջը . — Ի՞նչ անուն կը տրուի իշուն ձագին . — Ի՞նչ ծառայութիւններ կ'ընէ էջը . — Իր ականջները կա՞րճ են թէ երկայն :



Է 2



Շ ու ն

Շուները մեզի ի՞նչ ծառայութիւն կ'ընեն. — Ի՞նչ յատկութեան խորհրդանշան է շունը. — Ի՞նչ է ցուկակապը. — Ի՞նչ կը կոչուի շուներուն ակուան. — Որո՞նք են ժանիքը. — Կեռի՞քը :



Ո չ խ ա ր

Կը սնուցանեն ոչխարը. — Ի՞նչ կը կոչուի ոչխարներու պահապանը :



Կ ա տ ու ն

Կատու. — Ի՞նչ անուն կը տրուի կատուին պոռալուն. — Ի՞նչ թերութեան խորհրդանշան է կատուն. — Ի՞նչ կը կոչուի կատուին եղունգը :

Հնդկահար. — Ի՞նչ անուն կը տրուի հնդկահաւին ձայնին. — Ա՞մէն կենդանիներու հանած ձայնին զօղանջիւն կ'ըսուի. — Ի՞նչ կը կոչուի հնդկահաւին շարժումը :



Հ ն դ կ ա հ աւ

Սագր. — Սագերը ի՞նչ գոյն ունին. — Ի՞նչ կ'ըսուի թռչուններուն բերնին. — Ա՞մէն կենդանի կտուց ունի. — Ինչո՞վ ծածկուած է հաւերուն մորթը :




Ս ա գ

Ախաղաղ. — Ի՞նչ անուն կը տրուի աքաղաղին ձայնին. — Ի՞նչ կը կոչուի աքաղաղին էգը. — Հաւերուն ձագերը ի՞նչ կը կոչուին. — Ո՞րն է աքաղաղին բբուկը :




Ա ր ա ղ ա ղ



Ե Գ

Եգր. — Ի՞նչ կը կոչուի եգին պողալը . — Եզը մեզի Ի՞նչ ծառայութիւններ կ'ընէ . — Ի՞նչ կը շինուի անոր մորթով . — Ի՞նչ կը կոչուին կովերը պահպանողները :



Զ Ի


Զի . — Ի՞նչ կ'ըսուի ձիուն պողալուն . — Զին մեզի Ի՞նչ ծառայութիւններ կ'ընէ . — Ո՞րն է ձիուն բաշը . — Ո՞րն է ձիուն սմբակը :



Մ Ե Գ Ո ւ Լ Ը Ն Գ

Մեղուաւնոց . — Ի՞նչ է մեղուաւնոց մը . — Ո՞ր միջատներն են որ փեթակներու մէջ կը նստին . — Ի՞նչ կը գտնուի փեթակներու մէջ :

Ջրհոր . — Ի՞նչ է ջրհոր մը . — Ի՞նչպէս ջուր կը հանեն ջրհորէն :



Ջ ր հ ո ր

Սանդուղի . — Ի՞նչ բանի կը գործածեն սանդուղիները . — Որո՞նք են սանդղամատերը . — Քանի սանդղամատ ունի այս սանդուղը :



Ս ան Գ ո ւ Գ


### Ի Ն Զ Պ Է Ս Կ Ը Զ Ա Մ Բ Ո Ր Դ Ե Ն Զ Ր Ի Վ Ը Ա Յ

Լողալու մէջ ալ մարդ շատ կարող չէ . որչա՛փ ալ սորվի՝ խեցգետնի պէս կարող չէ լողալ, ո՛ւր մնաց ձկան նման : «Այս լաւ բան չէ», մտածեց Մարդը . փայտով նաւակ շինեց, թիակը ձեռքը առաւ և ջուրը ճեղքելով սկսաւ յառաջ երթալ : Մարդս ասկից շատ շուտով զգուեցաւ . «Ի՞նչ բան է որ կը թիավարես, կը թիավարես, բայց

քայլ մը հեռու չես կրնար երթալ» : Ի՞նչ պէտք էր ընել : Մարդս սկսաւ մտածել և տեսաւ թէ ծովուն վրայ գրեթէ շարունակ փառի կը փչէ , բայց պարապի կ'երթայ . « Ինչո՞ւ զուր տեղը կորսուի ան , ըսաւ . ճամբուն վրայ սաստիկ փոշի կը հանէ , ծովուն վրայ ալիքներ կը բարձրացնէ , երկինքէն ալ ամպեր կը հաշածէ , ուրեմն ստիպեմ զինքը որ ինձի ալ ծառայէ » : Այն ատեն Մարդը ձեռք առաւ կտաւը , առազաւս շինեց , քամին ալ զայն ուռեցնելով՝ յառաջ մղեց թէ՛ փոքրիկ և թէ՛ մեծ նաւերը : Մարդս քամին ալ լծեց այս կերպով , բայց ո՛չ մտրակ կար ձեռքը որ զայն քշէր , ո՛չ սանձ կար որ կեցնէր , ո՛չ ալ կապ ունէր որ կառավարէր զայն :

Թեյադրութիւններ . — 1. Այս ու հետեւեալները նախադասութեանց բաժնի վիճելով եւ ըստ այնմ ուղղել հարցումները :

- 2. Բացատրել շեղագիրները . — Զրուցագրել :
- 3. Որո՞ւ կ'ըսուի մակբայ . — Որոշել մակբայները :



ԶՈՒՐԻՆ ՎՐԱՅ ԱՆԻՒՆԵՐ

Եթէ քամին մեզի հնազանդէր , աղէկ կ'ըլլար , կրնայինք առագաստաւոր նաւով երթալ , բայց բանն այն է որ դուն դէպի հարաւ երթալ կ'ուզես , իսկ անիկա դէպի հիւսիս կը տանի քեզ : Դուն այսօր ճամբայ ելլել կ'ուզես , իսկ անիկա կ'ըսէ . « Վաղուան սպասէ՛ , այսօր ես հանգստանալ կ'ուզեմ » : Դուն ծանր երթալ կը փափաքիս , իսկ անիկա քու նաւդ տալէդի նման այս ու այն կողմ կը գլորէ ու տակն ու վրայ կ'ընէ :

« Ո՛չ , աղէկ բան չէ այս , մտածեց Մարդը , շոգին թէեւ քամիէն ծանր կը քշէ , բայց և այնպէս կը հնազանդի » : Եւ նաւերուն տակ անիւներ դրաւ . շոգին ալ շարժեց զանոնք , և սկսաւ ջուրին վրայ երթալ այնպէս ինչպէս ցամաքի վրայ : Ասոր համար Մարդս նաւուն մէջ հնոց է շինած , կը վառէ զայն , ջուրը կարսայիւն մէջ կ'եռացնէ , ծուխը խողովակներով վեր կը բարձրացնէ , իսկ շոգիով անխոր կը շարժէ և դէպ իր ուղած կողմը կը տանի նաւը :



### ՄԱՐԴԻԿ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԹՈՉԻՆ ՕԴԻՆ ՄԷՋ

Մարդս ծովու և ցամաքի անարդարութիւնը դիտարացնելէ ետք, սկսաւ նախաւնձիկ երկինքի թռչուններուն: Բայց Աստուած թևեր չէր տուած իրեն, ուրիշէն ալ փոխ առնել կարելի չէր. Ի՞նչ ընէ: Շատ կը ցանկար օդին մէջ թռչիլ, բարձրէն աչխարհս դիտել: Այն ատեն հարկ չպիտի ըլլար սարերը ճեղքել, ճամբաներ չիներ: Չորս կողմը լայն ճամբայ է: Արդէն մարդս սկսաւ սորվիլ և մտածել: Մտածեց, մտածեց և բան մը հնարեց վերջապէս—Օդապարիկը: Մեծ ու դասարկ գունձ

մը շինեց, տակէն նաւակ մը կապեց, մէջը նստաւ և վեր բարձրացաւ: Իր ոտքին տակ կը մնան ասագին անտառներ, սարեր ու ձորեր: Բայց ամսո՞ս որ մէկ բան մը զինքը կը խանգարէր, անւանձ քամին այն տեղն ալ իր զորութիւնը յայտնեց: Սկսաւ օդին մէջ աւելի նեղացնել Մարդս քան թէ ծովուն վրայ, քչե՛ց տարաւ զայն ուր որ կամեցաւ, կարծես բանի տեղ չէր դներ Մարդըս, և սա մինչև այսօր չէ կրցած քամին կառավարել: Բայց հաւանական է որ ասոր ալ ճարը պիտի գտնէ:

### Մ Ա Ր Դ Ո Ւ Ն Ն Ս Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Գիշատող գազանն իրեն համար որչ կը պատրաստէ անտառին մէջ, թռչունը բոյն կը կազմէ, ձիջասն ալ ծառին մէկ անդիին մէջ կը տեղաւորուի: Անոնց ամէնքն ալ ցրտին դէմ իրենք զիրենք կը պաշտպանեն, որն իր սեպհասկան բուրդով, միւսը փետուրով, իսկ երրորդը հաստ վերնամաշկով: Մարդս այս բնասուր զգեսները չունի, բայց օժտուած է խելքով որուն օդնութեամբ ամէն բանի

հնարը կը գտնէ : Անտառ կ'երթայ , ծառերը կը կտրէ , անոնցմով իրեն համար տուն կը շինէ : Հողին տակէն երկաթ կը գտնէ որով իրեն կացիւն , քանի , արօր և ուրիշ գործիքներ կը շինէ : Կաւէն աղիւս և աղիւսէն տուն կը շինէ , խրճիթին քացուածքը , երբեմն ալ պատերու ծակսիքը կը գոցէ : Աւազը հալեցնելով՝ ապակին գտաւ : Լուսամուտին վրայ ապակին անցնելով՝ լոյսը թափանցել կուտայ , արգիլելով հասնդեճ որ քամին տունէն ներս չմտնէ : Վոյշ ու քանքակ ցանեց , անոնցմով թել մանեց , ֆրան գործեց , շապիկներ ու քանկոններ պատրաստեց : Այծի պրօնէկն ու ոչխարի բուրդէն ցփսի ու ասուրիներ գործեց , և գազաններու մորթէն իրեն համար տաք մուշտակներ :

Թեյադրութիւններ . — 1. Գիշտիչ գազանն իրեն համար ի՞նչ կ'ընէ . — Թռչնուր . — Միջատը . — Մարդը :  
 2. Բացատրել շեղագիրները . — Զրուցագրել :  
 3. Որոշել դերանունները . — Քանի՞ տեսակ դերանուն կայ :

Ա. Ռ. Ա. Ծ

Աշխատող մարդը ուրիշէ կախում չ'ունենար , անկարօտ ու երջանիկ կ'ըլլայ :

Նապաստակը . — Այնքն երկչոտ կենդանին ո՞րն է . — Ո՞ր անասունին կը նմանի . — Ընդհանրապէս ո՞ւր կը գտնուի . — Կենդանիներու ո՞ր խումբին կը պատկանի :



Ն ա պ ա ս տ ա կ

Ճագարը . — Ի՞նչ կը կոչուի ճագարի մորթը . — Ինչո՞վ կը կերակրուի . — Ո՞ւր կը գտնուի . — Կենդանիներու ո՞ր խումբէն է :



Ճ ա գ ա Ր

Այծը . — Այծն ի՞նչ կը կրէ ճակտին վրայ . — Ինչի՞ կը ծառայեն իր եղջիւրները . — Ի՞նչ կ'ուտէ . — Այծին վրայ ուրիշ ի՞նչ զիտելիքներ կան :



Ա յ Ճ

Ուղտը . — Ի՞նչ տեսակ կենդանի է . — Ի՞նչ յատկութիւն ունի . — Ի՞նչ օգտակարութիւն կ'ընծայէ :



Ո լ Պ Տ



Ջ ա ղ ա ց ք

Ջաղացքը . — Ի՞նչ կը տանին ջաղացքը . — Ի՞նչ նըպատակաւ կը տարուի ցորեները . — Ի՞նչպէս կը փոխուի ալիւրի . — Ջաղացքն ի՞նչով կը դառնայ :



Ժ ա մ ա գ ո Ր Ժ

Ժամագործը . — Ի՞նչ կ'ընէ ժամագործը . — Որո՞նք են ժամագործի մը գործիքները . — Նկարագրեցէ՛ք ժամագործը :



Ս ա յ լ ա գ ո Ր Ժ

Սայլագործը . — Որո՞ւ կ'ըսուի սայլագործ . — Ի՞նչ կը շինէ . — Ո՞րոնք են սայլագործի մը գործիքները . — Նըկարագրեցէ՛ք սայլագործը :

Կովը . — Ի՞նչ գոյն ունի կովը . — Ի՞նչ կը կոչուի կովուն ձայնը . — Ի՞նչ բաներ կան գլխուն վրայ . — Ամէն կենդանիի ձայնը բառաշէլ կը կոչուի՞ . — Ի՞նչ օգտակարութիւն ունի . — Կենդանիներու ո՞ր խումբին կը պատկանի :

Դանակագործը . — Ի՞նչ է դանակագործը . — Ի՞նչ բանի կը գործածենք դանակը . — Ածելի՞ն . — Զմելի՞ն . — Մկրա՞տը . — Կացի՞նը :

Ապիստալանառը . — Ի՞նչ կը ծախէ ապիստալաճառը . — Ո՞րն է այն կենդանին որուն միսէն ապուխտ կը շինուի . — Ի՞նչպէս կը պատրաստեն ապուխտը :

Ծաղարարը . — Ի՞նչ կը ծախէ ծաղարարը . — Յիշեցէ՛ք քանի մը տեսակ խմորեղէններ . — Ի՞նչ է քաքարը = պօղայա . — Ծա՞ղը = բազրայա . — Կարկանդա՞կը = պէօրէկ :

### ՉԱՐՄԱՆԱԼԻ ՄՇԱԿ

Կը ճոնայէ բագրնայասակ մեքենան,  
 Շատ յիսեռներ և անիւներ հաղար կան,  
 Որ կը գառնան, կը ճռնչեն, կը ճչեն,  
 Սակայն զանոնք շարժեցնող մարդիկ չեն:

Շոգին կարծես մի գերբնական հրամանով  
 Միշտ կը շարժի ահա բոլոր շտապով,  
 Աշխատասէր մշակի պէս կը գործէ,  
 Ամէն տեսակ բամբակ և բուրդ կը մանէ:

Փող կը կտրէ, կը սղոցէ գերաններ,  
 Թէ հարկ ըլլայ ապակիներ կը տալէ,  
 Ոչխարին ալ կաթէն կարագ կը հանէ  
 Եւ մինչև կարծր պողպատն իսկ կը յղկէ:

Թելադրութիւններ. — Բացատրել շեղագիրներն ու  
 գրուցագրել:

### ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Մարդն անասուններէն բարձր է, որովհետև  
 կրնայ մտածել թէ ինչ բանը բարի և ինչ բանը  
 չար է: Եթէ կտոր մը հում միս թողունք կատուին

առջև, կատուն կը գողնայ: Չենք կրնար մեղադրել  
 կատուն որ կը գողնայ, որովհետև ան մինակ  
 իր փորը կշտացնելուն վրայ կը խորհի, ուրիշ բան  
 չհասկնար: Եթէ կատուն միւր գողցաւ ու անպատիժ  
 մնաց, շատ ուրախ կ'ըլլայ և ուրիշ անգամ  
 նորէն կ'ընէ: Բայց մարդն այնպէս չէ: Տղայ մը  
 եթէ ուզէ բան մը գողնալ՝ նախ չորս կողմը կը  
 նայի, երբ ապահով ըլլայ թէ մարդ չտեսներ  
 զինքը՝ կը գողնայ: Բայց գողնալէն յետոյ սիրտը  
 հանգիստ չմնար, միշտ կը կասկածի, ներքին ձայն  
 մը իրեն կ'ըսէ. «Գէշ բան ըրիր»: Այս ներքին  
 ձայնին խիղճ կ'ըսուի:

Երբ տղայ մը սուտ խօսի, բան գողնայ, մէկը  
 զրպարտէ, այս խիղճը կը յանդիմանէ զինքը և  
 տղան ինքն իրեն կը յարցարուի եթէ ուրիշէն  
 չյանդիմանուի ալ: Ազնիւ տղու մը դէմքը միշտ  
 ուրախ ու համարձակ կ'ըլլայ. ընդհակառակն յան-  
 ցանք գործող, սուտ ըսող, գողութիւն ընող տղու  
 մը դէմքը միշտ կասկածոտ կ'ըլլայ, միշտ խո-  
 ժոռ, քարկացոտ, վախկոտ:

Թելադրութիւններ. — 1. Այս ու հետեւեալ հատ-  
 ուածներուն վրայ հարցումներ ընել:

2. Բացատրել շեղագիրները. — Զրուցագրել:
3. Որո՞ւ կ'ըսուի յատկացեալ. — Ի՞նչ հողով կ'ըլլայ:
4. Որո՞չեւ յատկացուցիչները:

Ա Կ Ն Ա Մ Ա Ն Ք

Դաստիարակեալ ու հարուստ անձ մը կը խորհեր թէ ո՛չ միայն պարսական էր ջերմ ու երկհաղած սրտով երախտագէտ ըլլալ իր դաստիարակին որ լուսաւորած էր իր մանկական միտքը, այլև անոր արտայայտել հնազանդութիւնն ու մեծարանքը: Օր մը դաստիարակին տան առջևէն անցնելու տեսն, իր սովորութեան համեմատ, խորին յարգանք յայտնեց: Ասոր վրայ զարմացած մնացին իր հետեւորդները: Հարուստը յարեց. « Պարտքս է որ յարգանքով վարուիմ այս մարդուն հետ որ ինձի սորվեցուց մարդ ըլլալու միջոցը, և ասով բարձրանամ դաստիարակիս աստիճանին: Ո՛չ ապաքէն ճշմարիտ մեծութիւնն առաջինութեան մէջ է »:

Թելադրութիւններ. — 1. Դաստիարակեալ անձ մը ի՞նչ կը խորհէր. — Օր մը ի՞նչ ըրաւ. — Ի՞նչ խօսակցութիւն տեղի ունեցաւ:

2. Բացատրել շեղագիր բառերը. — Հատուածը Ուղղադրել:

3. Ո՞ր բառերը անուն, ո՞ր բառերը բայ կը ցուցնեն:

4. Որոշել նախադասութիւնները:

Ա. Ռ. Ա. Ծ

Երնէկ անոր որ խելքքին  
 Յարգ ճանչնալու խելք ունի:  
 Երնէ՛կ անոր որ անմիտին  
 Համբերելու սիրտ ունի:

Ո՞Վ Է ԱՍՏՈՒԱԾ

Երկիրն ինձի հարցուց՝  
 Ո՞վ է, ո՞վ Աստուած:  
 — Ա՛ն, որուն Բարիքով  
 Աշխարհ է լեցուած.  
 Ա՛ն, որ միակ քայլով  
 Կը չափէ անհունն  
 Եւ որմէ Արեւն ալ  
 Կ'առնէ իր շողուն:

\* \* \*

Ան է որ ստեղծեց  
 Երկիրն ու երկինք,  
 Ա՛ն է որուն մենք միշտ  
 Փառք տալ կը պարտինք,

Ա՛ն՝ որ չո՛ւնի բնաւ  
Ո՛չ ծիր, ո՛չ սահման,  
Որ տիեզերքին մէջ  
Կարգեց ամէն բան :

\* \* \*

Մէկ ակնարկովն Անի  
Յոյացոյց Լոյսը,  
Մարդ էակիւն շնորհեց  
Սփոփող յոյսը,  
Եւ Մէրն ալ հաստատեց  
Մարդուս սրտին մէջ,  
Ի՛նք որ անհուն սիրոյ  
Հնոցն է անչէջ :

\* \* \*

Ի՛նք՝ աղբիւր բարութեան,  
Արեգակն արդար :  
Օրհնե՛նք Իր անունն,  
Գովե՛նք անդադար :

Թելադրութիւններ. — 1. Բացատրել շեղագիր բա-  
ռերը. — Թելադրութեամբ գրել հատուածը :



### ԱՍՏՈՒԱԾ ԱՄԷՆ ՏԵՂ Է

Ամէն տեղ ներկայ ես դուն, Աստուած իմ,  
ամէն տեղ կը գտնուիս, Լոյսի, խաւարի, հիւշեի  
ու աշխարհի մէջ, Միւսնոյն ժամանակ որ իմ ա-  
ղօթքս կը լսես, քու փառքի Աթոռէդ կը լսես  
նաև սերովքէներուն և ֆերովքէներուն երեխոր-  
քեան սրբասացութիւնը: Դուն ուրեմն, Աստ-  
ուած, մեր ձայնը կը լսես, ինչպէս սա դեղձանի-  
կիւն անուշ երգն ու նա՛ ծաղկին վրայ թոյսող  
մեղուին բզկանքը: Ընդունէ՛ իմ աղօթքս ու պա-  
ղատանքս, շնորհք տո՛ւր ինձի որ երբէք չմոռնամ  
թէ ամենատես աչքդ վրաս կը նայի միշտ և ամէն  
ատեն իբրև թէ առջևդ եմ՝ այնպէս շարժիմ,  
խորհիմ ու գործեմ:

- Թելադրութիւններ. — 1. Ո՛ւր է Աստուած. — Որո՞նց  
աղօթքը կը լսէ. — Որո՞նց սրբասացութիւնը. — Որո՞նց  
երգը. — Բզկա՞նքը. — Աստուծո՞ւն ինչե՛ր կը խնդրենք:  
2. Բացատրել շեղագիր բառերը. — Թելադրութեամբ  
գրել հատուածը:  
3. Որոշել անուններն ու բայերը:

Ա. Ռ. Ա. Ծ

Ով որ ըսաւ « Աստուած, Աստուած »  
Ա՛ն բանէ մը զուրկ չմնաց :

Տ Ո Ւ Ր Ք

Ամէն ֆաղափացի իր բաժինն ունի երկրին ծախքերուն մէջ. այս բաժինը կամ մասնակցութիւնը կը կոչուի տուրք, զոր կը վճարէ ընդհանուրին օգտին համար : Ամէնքս ալ բարիքներ կը վայելենք այդ տուրքին շնորհիւ, կը զարգանանք, հանգիստ կ'ապրինք :

Այս տուրքերը սիրով վճարելու է, և քանի որ ամէն մարդ անկէ կ'օգտուի՝ պէտք է որ ամէն մարդ ալ մասնակցի անոր : Առանց տուրքի ի՞նչ պէս պիտի ունենայինք երկաթուղիներ, քրաւփայտներ, հանրային հաստատութիւններ, եկեղեցիներ, դպրոցներ, վանքեր, հիւանդանոցներ, ևն : Առանց անոր, մեր նմաններուն հետ յարաբերութիւն չպիտի ընէինք. դպրոց, կրթութիւն, հանգիստ, անդորրութիւն չպիտի ունենայինք :

Տուրքը կը վճարենք առ բոլորին ծախքերը գոցելու համար, և պետութիւնը գանձելով մեր վճարած տուրքը՝ ինք կը հոգայ վարչական, կրթական, զինուորական, ոստիկանական և հանրային բոլոր հաստատութիւնները : Յօժարութեամբ ու փութկոտութեամբ վճարենք մեզմէ պահանջ-

ուած տուրքը որ մեր ապահովութեան պիտի ծառայէ : Այլ և այլ տեսակ տուրքեր կան — մաքսային, զինուորական, վաճառականական, քաղաքացիական, ևն :

- Թելադրութիւններ. — 1. Քաղաքացին ի՞նչ բաժին ունի. — Ինչո՞ւ կը մասնակցինք. — Քանի՞ տեսակ տուրք կայ. — Ձեր ծնողքն ասոնցմէ ո՞րը կը վճարէ :
2. Բացատրել շեղագիրները. — Ձրուցագրել :
3. Որո՞ւ կ'ըսուի խնդիր. — Քանի՞ տեսակ խնդիր կայ :
4. Որոշել սեռի խնդիրները :




Рис 3




Рис 4




Рис 5




Рис 6




Рис 7




Рис 8





Рис 9







Рис 10





Рис 11





## ՑԱՆԿ ՆԻԻԹՈՑ

<b>Վաւերագիր Ուսումնական Խորհրդոյ</b>	12
<b>Աստուծոյ մեծութիւնը</b>	14
<b>Երկու ֆայեր</b>	13
<b>Կովր</b>	15
<b>Ձի</b>	17
<b>Այծերն ու աշխարհներ</b>	19
<b>Աղուէս եւ ախլոր</b>	20
<b>Կատու եւ օձ</b>	21
<b>Փիղը</b>	22
<b>Կապիկ նզնաւօր</b>	24
<b>Կապիկն ու հայիկն</b>	26
<b>Արծիւր</b>	27
<b>Եկեանիկը</b>	29
<b>Մեղու</b>	30
<b>Սմբակաւորներ</b>	31
<b>Թանձրամորթներ</b>	32
<b>Սննաւորներ</b>	34
<b>Սողուններ ու գորտազգիներ</b>	37
<b>Թռչուններ</b>	39
<b>Կենդանիներու սարիքը</b>	44
<b>Խնձորենի մր</b>	45
<b>Գիւղացիքն եւ կապիկը</b>	43
<b>Խոնար տօթորը եւ փոքրիկ գիւղացիքն</b>	49
<b>Դժգոհ Փիլիկ</b>	50
<b>Հազուագիւտ բարեկամութիւն</b>	52
<b>Խոզկտղնիին անկումը</b>	53
<b>Խաբէքայ մարտը ինքն իր դասախազն է</b>	54
<b>Հարուսներն եւ աղբաները</b>	55
<b>Կրթութիւնը կ'աղղէ բնաւորութիւնը</b>	56
<b>Ցուսախաբութիւն</b>	58 ]

ՅՈՒՐԱԿԱՆ ԿՆՆՆԵՐ

Հեղանոցի անձր . . . . .	59
Վարդ, կակաչ . . . . .	60
Ծաղիկներուն երգը . . . . .	62
Բայսերը . . . . .	63
Յիսուսի Ոսելուան եւ Ս Ընթրիւր . . . . .	67
Ս. Թաւեոս եւ Ս. Բարթողիմէոս . . . . .	69
Ս. Գրիգոր Լուսաւորիչ . . . . .	70
Ս. Սահակ Պարբեւ . . . . .	72
Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի . . . . .	74
Գարուն . . . . .	75
Զորս Էղանակ . . . . .	76
Զգայարանք . . . . .	78
Ջղային դրօսքիւն . . . . .	83
Շնչառօթիւն . . . . .	84
Առանց ձիու նամբողութիւնը . . . . .	86
Ի՛նչպէս կը նամբողեն ջրի վրայ . . . . .	91
Զուրիւն վրայ անիւներ . . . . .	93
Մարդիկ ի՛նչպէս կը բռչին օդին մէջ . . . . .	94
Մարդուն հմտութիւնը . . . . .	95
Զարմանալի սեակ . . . . .	100
Անձնական արժանապատեանութիւն . . . . .	100
Ակնածանք . . . . .	102
Ո՞վ է Աստուած . . . . .	103
Աստուած ամէն տեղ է . . . . .	105
Տարբ . . . . .	106





ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. ՍԵՐՎԻՉԷՆ

Կ. ՊՈԼԻՍ



2013

4000

« Ազգային գրադարան



NL0062554

34  
 Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք  
 Մ Ի Ա Յ Ե Ա Լ Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Յ Հ Ա Յ Ո Յ

Ս Ա Յ Ք Ե Ն Ե Լ Ե Զ Ո Ի

Հ Ի Մ Ն Ո Վ Ի Ն Բ Ա Ր Ե Փ Ո Ւ Ռ Ի Ա Մ

Մ Ա Ն Կ Վ Ա Ր Ժ Ա Կ Ա Ն Ե Ա Ր Մ Ա Ր Ա Գ Ո Յ Ն Ս Լ Թ Ո Տ Ո Վ Պ Ա Տ Ր Ա Ս Ո Ւ Ա Մ

	Ղ.թ.
1. Մանկապարտեզ Ա. Տարի . . . . .	2
2. Մանկապարտեզ Բ. Տարի . . . . .	3
3. Տարրական Դասընթացք Ա. Տարի . . . . .	3
4. Տարրական Դասընթացք Բ. Տարի . . . . .	4
5. Միջին Դասընթացք Ա. Տարի . . . . .	4
6. Միջին Դասընթացք Բ. Տարի . . . . .	4
7. Մայրենի Լեզու Գ. Տարի . . . . .	4
8. Մայրենի Լեզու Դ. Տարի . . . . .	4
9. Ա. Գիրք Ֆրանսերենի և Հայ բարգմանութեան	3
10. Գրիստոնեական . . . . .	1 1/2
11. Հողային Արդիւնաբերութիւն Ա. Պրակ . . .	1

12. Գեղագրութիւն Խ. Թանտաճեանի

Տեսք Ա. 20 փարայ

- » Բ. » »
- » Գ. » »
- » Դ. » »
- » Ե. » »
- » Զ. » »

Սոյն հրատարակութեանց համար դիմել  
 ուղղակի Ընկերութեան գրասենեակը, Պոլիս,  
 Պանչէ Գարու, Սասրգիէ Խան, ք. 27 :

Ծան. — Հրատարակ եղած մեն մի օրինակ Ընկե-  
 րութեան պաշտօնական կնիքը պէտք է կրէ անպատճառ .